

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՂԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՊՈՏՈՍՆՅԱՆ ԱԿՍԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՈՐՊԵՍ ԼԵՈՆԱՅԻՆ ԵՐԿՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՑԵՐԸ**

**ԻԴ 03.02 «Տնտեսական, սոցիալական և քաղաքական
աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

ПОДОСЯН АКСЕЛ АРУТЮНОВИЧ

**ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ГЕОГРАФИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ СЕЛЬСКОГО
РАССЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, КАК ГОРНОЙ СТРАНЫ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени доктора географических наук по специальности 24.03.02- "Экономическая, социальная и политическая география"

ЕРЕВАН – 2015

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Պաշտոնական ընդունմախոսներ՝

Աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ

Աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ԲՈԳԴԱՆՈՎԱ ԼԻԴԻԱ ՊԵՏՐՈՎՆԱ, ՌԴ

Տնտ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆԻ

**Առաջատար հիմնարկ՝ Խաչատուր Աբովյանի անվան Հայկական Պետական
Սանկավարժական Համալսարան**

**Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 19-ին ժամը 14³⁰-ին
ԵՊՀ-ում գործող 005 «Երկրագիտության» մասնագիտական խորհրդի
նիստում:**

Հասցեն՝ 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առարկած է 2015թ. մայիսի 19 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Երկրաբ.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ

Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ТЕМА ДИССЕРТАЦИИ УТВЕРЖДЕНА В ЕРЕВАНСКОМ
ГОСУДАРСТВЕННОМ УНИВЕРСИТЕТЕ**

Официальные оппоненты:

Доктор геогр. наук, профессор

Даниелян Карине Суреновна

Доктор геогр. наук, профессор

Богданова Лидия Петровна, РФ.

Доктор эконом. наук, профессор

Марзпанян Арутюн Александрович

**Ведущая организация: Армянский Педагогический Университет
им. Хачатура Абояна**

Защита состоится 19-ого июня 2015г. в 14³⁰ на заседании

**Специализированного совета 005 “Науки о Земле” при Ереванском
Государственном университете .**

Адрес: 0025, Ереван, ул. А.Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 19-ого мая 2015 г.

**Учёный секретарь Специализированного совета,
кандидат геолого-минерал. наук, доцент**

М.А.ГРИГОРЯН

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից փուլում գերակա խնդիրներ են համարվում ագրարային սեկտորի զարգացումը, գյուղական բնակչության նյութական և հոգևոր պահանջնությունների բավարարումը, բնակչության միգրացիայի կարգավորումն ու կառավարումը և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Դրանց լուծումը մեծապես կախված է նաև ՀՀ նման լեռնային երկրում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման մեջ տեղի ունեցող գործընթացների բացահայտումից և արդյունավետ կառավարումից՝ ժամանակակից շուկայական հարաբերությունների և կայուն հասարակական զարգացում ապահովելու անհրաժեշտության պայմաններում:

Վերջին երկուտակես տասնամյակում ՀՀ-ում տեղի ունեցած տարաբնույթ գործընթացներն իրենց ներգործությունն են ունեցել ՀՀ գյուղական բնակավայրերի վրա՝ առաջացնելով գյուղական բնակչության և բնակավայրերի համար տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, տարածաշրջանային և այլ հիմնախնդիրներ: Բերված փաստարկները հիմք են տալիս պնդելու, որ ՀՀ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը և գյուղական տարաբնակեցման վերափոխումն ու կատարելագործումը հանդիսանում են կայուն հասարակական զարգացման կարևորագույն նախադրյալ: Այդ հանգամանքը խիստ կարևորում և արդիական է դարձնում ՀՀ գյուղական բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրությունը, որը հնարավորություն կտա բացահայտել նրանում տեղի ունեցող գործընթացները և զարգացման ժամանակակից միտումները: Դրանց ներքին մեխանիզմների և արտաքին գործոնների վերլուծության ու գնահատման միջոցով հնարավոր կլինի մշակել և իրականացնել սոցիալ-տնտեսական, տարածաշրջանային և ժողովրդագրական այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի հանրապետության գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին, գյուղական տարաբնակեցման վերափոխման ու կատարելագործմանը, գյուղական բնակատեղերի տարածքային և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել ՀՀ գյուղական բնակատեղերում ու տարաբնակեցման մեջ տեղի ունեցող ժամանակակից գործընթացների էությունն ու առանձնահատկությունները, որպես լեռնային երկրի, դրանց դրսնորման տարածաշրջանային պայմաններն ու տարբերությունները: Հիմնավորել ՀՀ գյուղական տարաբնակեցման վերափոխման ու կատարելագործման, գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման և առաջընթացի ուղիները:

Հետազոտության հիմնական խնդիրներն են.

- Հիմնավորել ժամանակակից պայմաններում ՀՀ-ի նման լեռնային երկրներում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ուսումնասիրման գիտամեթոդական հիմնահարցերը:
- Ցույց տալ գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ձևավորման պայմանները, դրանց առանձնահատկություններն ու զարգացման օրինաչափությունները ՀՀ-ի նման լեռնային երկրներում:
- Հիմնավորել գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման դերը ՀՀ-ի նման լեռնային երկրներում կայուն հասարակական զարգացման գործում:
- Բացահայտել ՀՀ գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման բնորոշ գծերը և առանձնահատկությունները որպես լեռնային երկրի:
- Հիմնավորել ՀՀ-ի նման լեռնային երկրներում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման տիպաբանության և շրջանացման դերը բնակավայրերի հեռանկարային զարգացման և կառավարման գործում:
- Բացահայտել ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի ժամանակակից միտումները և հիմնախնդիրները:

- Վերլուծել և բացահայտել ՀՀ գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման տարածաշրջանային առանձնահատկությունները և հիմնախնդիրները:
- Ցույց տալ ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացման և վերափոխման վրա ազդող հիմնական գործոնները և դրանց տարածաշրջանային տարբերությունները:
- Բացահայտել ՀՀ ժամանակակից վարչատարածքային բաժանման և գյուղական տարաբնակեցման փոխազդեցությունները:
- Հիմնավորել ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացման հիմնական ուղղությունները՝ ելնելով ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գերակա խնդիրներից և կայուն հասարակական զարգացման անհրաժեշտությունից:

Դետագուտության օբյեկտը և առարկան : Դետագուտության օբյեկտը ՀՀ գյուղական բնակատեղերն ու տարաբնակեցումն է, առարկան՝ ՀՀ-ն նման լեռնային երկրում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ժամանակակից վիճակի, տարածաշրջանային առանձնահատկությունների, դրանցում տեղի ունեցող գործընթացների ու զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

Դետագուտության մեթոդները: Ատենախոսության կատարման համար տեսական և մեթոդական հիմնարար դրույթ է հանդիսացել այն փաստը, որ գյուղական բնակավայրերն ու տարաբնակեցումը բնական նախադրյալների և հասարակական գործոնների ներգործությամբ ստեղծված միասնական համակարգ է, որի համար տեսական հիմք են հանդիսացել Ն.Լյալիկովի, Յու. Սառչեկինի, Ա.Կովալյովի, Վ.Զառշվիլու, Շ.Գեոկչյանկու, Վ.Մաքսիմովի, Ա.Ալեքսեևի և այլոց աշխատությունները:

Դետագուտության ընթացքում կատարվել է ՀՀ գյուղական բնակավայրերի ու տարաբնակեցման ձևավորման նախադրյալների և զարգացման գործոնների համալիր վերլուծություն, համադրում և ընդհանրացում: Կիրառվել են պատմաաշխարհագրական, համենատական աշխարհագրական, տիպաբանության, շրջանացման, քարտեզագրական, վիճակագրական, սոցիոլոգիական մեթոդներ ու մոտեցումներ: Օգտագործվել են հեղինակի կողմից կատարված դաշտային-արշավախմբային ուսումնասիրությունների արդյունքները:

Դետագուտության համար ելակետային նյութ են հանդիսացել.

- Սոցիալ-տնտեսական աշխարհագրության տեսական և մեթոդաբանական հարցերին նվիրված գիտական գրականությունը:
- Բնակչության և բնակավայրերի աշխարհագրությանը, մասնավորապես՝ լեռնային երկրների գյուղական բնակատեղերին ու տարաբնակեցմանը նվիրված ուսումնասիրությունները:
- ՀՀ բնակչության և բնակավայրերի վերաբերյալ գիտական աշխատանքները:
- ՀՀ գյուղական բնակավայրերի և բնակչության վերաբերյալ 1831-2014 թթ. վիճակագրական տվյալները:
- Տեղագրական և ՀՀ բնակչությանը ու բնակավայրերին նվիրված թեմատիկ քարտեզները:
- ՀՀ ԱՎԾ և մարզային վիճակագրական ծառայությունների գյուղական բնակչության և բնակավայրերի վերաբերյալ նյութերը և առանձին մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը:
- Դաշտային հետագուտությունների ժամանակ հավաքած փաստական, վիճակագրական և մարզերում ու գյուղական համայնքներում ձեռք բերված նյութերը:

ՀՀ ժամանակակից գյուղական բնակչության և տարաբնակեցման վերլուծությունը կատարվել է ԱՎԾ 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղական մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներով, իսկ գյուղական բնակչության թվաքանակի շարժընթացի ժամանակակից միտումների բացահայտման համար օգտագործվել են 2001 և 2011 թվականների մարդահամարների, ինչպես նաև 2014 թվականի ընթացիկ հաշվառման տվյալները:

Պաշտպանվող հիմնադրույթները

- ՀՀ նման լեռնային ռելիեֆ, բնաաշխարհագրական պայմանների խիստ բազմազանություն և ուրբանիզացիայի բարձր կենտրոնացվածություն ունեցող երկրներում տարաբնակեցման միասնական համակարգում գյուղական բնակատեղերն ու տարաբնակեցումն ունեն «հնքնուրույնության» բավական բարձր աստիճան և էական դեր են խաղում լեռնային տարածքներում գյուղական բնակատեղերի զարգացման, տարածքային ու մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կայուն հասարակական զարգացման գործում:
- ՀՀ-ի նման լեռնային երկրների գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման համալիրային տիպաբանությունը և շրջանացումն ունեն աշխարհագրական հետազոտություններն ընդհանրացնող և զարգացման միտումները բացահայտող դեր:
- ՀՀ-ի նման լեռնային երկրներում կայուն հասարակական զարգացում ապահովելու, դրանց տարածքային, մարդկային և այլ ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նախապայմաններից մեկը տարաբնակեցման համակարգի պահպանումն ու կատարելագործումն է, գյուղական բնակատեղերում ուրբանացման գործընթացների տարածումը և խորացումը:
- ՀՀ սահմանափակ տարածքը և աշխարհագրական պայմանների խիստ բազմազանությունը ստեղծում են ինքնատիպ պայմաններ գյուղական բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման համար, որի հետևանքով ՀՀ գյուղական բնակատեղերն ու տարաբնակեցումն առանձնանում են լեռնային երկրների համար տիպական, բայց նաև առանձնահատուկ գծերով:
- ՀՀ-ում, որպես լեռնային երկողի, բնատնտեսական յուրաքանչյուր միավոր առանձնանում է պատմաազգագրական, բնական համալիրի, տնտեսության զարգացման ու մասնագիտացման և գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ինքնատիպ առանձնահատկություններով, քանի որ բնատնտեսական միավորներն առավել մեծ չափով են իրենց վրա կրում բնական համալիրի տարրերի և տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը:
- Ժամանակակից պայմաններում ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացումը, վերափոխումը և կատարելագործումը տեղի է ունենում բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, սոցիալ-ժողովրդագրական, աշխարհաքաղաքական (տարածշրջանային), վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործունների ազդեցության տակ, որոնք տարբեր մարզերում, տարածաշրջաններում, գյուղական համայնքներում ու բնակավայրերում դրսևորվում են տարբեր կերպ՝ կախված դրանց աշխարհագրական դիրքից, բնատնտեսական առանձնահատկություններից, սոցիալ-ժողովրդագրական ու տարածաշրջանային իրավիճակից:
- ՀՀ-ի նման լեռնային և կտրատված ռելիեֆ ունեցող երկրներում վարչատարածքային բաժանման համակարգն առավել կարևոր դեր ունի գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման, առանձին գյուղերի զարգացման ու առաջընթացի համար: Յարթավայրային տարածք ու համեմատաբար զարգացած տրանսպորտային ուղիներ և լեռնային ռելիեֆ ու միջբնակավայրային թույլ կապեր ունեցող տարածաշրջանների գյուղական համայնքների խոշորացման հարցի նկատմամբ պետք է ցուցաբերել տարբերակված նոտեցում:
- ՀՀ գյուղական բնակավայրերի հեռնակարարային զարգացման հիմնական ուղիներից մեկը պետք է դառնա նախալեռնային, լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր գյուղերի խոշորացումը, լքված բնակավայրերի վերականգնումն ու ամրացումը:

Աշխատանքի գիտական նորույթը

1. ՀՀ-ի օրինակով վերլուծվել և հիմնավորվել են լեռնային երկրներում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության գիտամեթոդական հիմնահարցերը:
2. Բացահայտվել են լեռնային երկրների, մասնավորապես՝ ՀՀ-ի գյուղական տարա-

բնակեցման ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները և օրինաչափությունները:

3. ՀՅ գյուղական բնակավայրերն ու տարաբնակեցումը բնութագրող քանակական և որակական ցուցանիշների վերլուծության հիման վրա բացահայտվել են գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման բնորոշ գծերը որպես լեռնային երկրի:

4. Կատարվել է ՀՅ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժնթացի ուսումնասիրություն, ժամանակակից միտումների ու հիմնախնդիրների բացահայտում:

5. Բացահայտվել և հիմնավորվել է ՀՅ-ի նման լեռնային երկրներում գյուղական տարաբնակեցման շրջանացման և առանձին տաքսոնմիական միավորների դերը գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման, պլանավորման և կառավարման գործում:

6. Առաջին անգամ կատարվել է Արարատյան բնատնտեսական շրջանի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտություն, առանձնահատկությունների և հիմնախնդիրների բացահայտում՝ որպես առանձին լեռնային տարածաշրջանների:

7. Բացահայտվել է ժամանակակից պայմաններում ՀՅ գյուղական բնակավայրերի զարգացման և վերափոխման վրա ազդող բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, ժողովրդագրական, վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործոնների դերը և դրանց տարածաշրջանային տարբերությունները:

8. Հիմնավորվել է գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման և վարչատարածքային բաժանման փոխազդեցությունների դերը՝ ՀՅ-ում վարչատարածքային բաժանման, գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման վերափոխման և զարգացման գործում:

9. Բացահայտվել է գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման և տարաբնակեցման վերափոխման ու կատարելագործման դերը ՀՅ-ում տարածքային և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կայուն հասարակական զարգացման գործում:

10. Ելենով ՀՅ զարգացման ռազմավարական գերակա խնդիրներից՝ տարածքային և մարդկային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու անհրաժեշտությունից, հիմնավորվել է գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման հեռանկարային զարգացման հիմնական ռեզուլտյունները:

Գործնական նշանակությունը. Հետազոտության եզրակացություններն ու հետևող նշանակություններն ունեն ինչպես գիտամեթոդական, այնպես էլ կիրառական-գործնական կարևոր նշանակություն: Դրանք կարող են օգտագործվել լեռնային այլ երկրներում համանման աշխատանքներ կատարելիս՝ համեմատական աշխարհագրական վերլուծություններում և գիտամեթոդական հարցերում: ՀՅ համար դրանք օգտագործվել և կարող են օգտագործվել երկրի տնտեսության տարածքային կազմակերպման կատարելագործման, առանձին նարզերի և տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի, տարաբնակեցման նոր սխեմաների մշակման, բնակավայրերի ստեղծման և տարածաշրջանային արդյունավետ քաղաքականություն իրականացնելու գործընթացներում: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել նաև ՀՅ-ում տարածքային կառավարման խնդիրների կատարելագործման, վարչատարածքային բաժանման նոր սխեմայի մշակման, տարբերակած ներդրումային և հարկային քաղաքականություն իրականացնելու, համայնքային - գյուղական զարգացման ծրագրերի մշակման և ՀՅ-ում զբոսաշրջության մասնագիտացված ձևերի, մասնավորապես՝ գյուղական, էկոլոգիական և էթնիկական զբոսաշրջության զարգացման համար: Հետազոտության արդյունքներն օգտագործվել են նաև ՀՅ աշխարհագրական, պատմաշխարհագրական, ժողովրդագրական և հայագիտական բնույթի դասընթացների ուսումնական ծրագրերում և

դասագրքերում, ներառյալ նաև ՀՀ մարզերի և տարածաշրջանների վերաբերյալ ուսումնագիտական նյութերում: Դրանք կարող են նաև ծառայել հիմք ՀՀ-ում կայուն հասարակական գարգացման խնդիրներն իրականացնելու համար:

Գործնական ներդրումը: Ուսումնասիրության արդյունքներն օգտագործվել են ՀՀ Տարածքային կառավարման նախարարության և Շիրակի, Վայոց Ձորի, Լոռու, Տավուշի ու Սյունիքի մարզերի սոցիալ-տնտեսական գարգացման ծրագրերում, ինչպես նաև ԵՊՀ-ի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրիատի «Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն», «Հայաստանի պատմական աշխարհագրություն», «Սոցիալ-տնտեսական քարտեզագրություն» և մագիստրատորայի «ՀՀ սոցիալ-տնտեսական գարգացման հիմնախնդիրները», «Կիրառական աշխարհագրություն», «Սոցիալական աշխարհագրություն» դասընթացների ուսումնական ծրագրերում: Մեկ տասնյակից ավելի քարտեզներ հրատարակվել են ՀՀ ազգային ատլասում:

Փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթները և հետազոտության արդյունքները ներկայացվել են ԵՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան գիտական նստաշրջաններում, ԵՊՀ-ի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի գիտական սեմինարներում, լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական գարգացման հիմնախնդիրներին նվիրված անդրկովկասյան գիտական կոնֆերանսում (Ե. 1985 թ.), հանրապետական գիտաժողովներում (Ե., 1999, 2007), Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները թեմայով կազմակերպված գիտագործնական կոնֆերանսում (Արթիկ 2001-Աշխարհագրություն 2001 թ.), Լեռնային մարզերի գեոնորֆոլոգիային, նեոտեկտոնիկային և կայուն գարգացմանը նվիրված միջազգային գիտաժողովում (Ե. 2001), «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության տեսությունը. ժամանակակից գիտելիքների սինթեզ», առաջին համառուսական կոնֆերանսում (Смоленск 2004), Կովկասյան տարածաշրջանում բնակչության միգրացիայի հարցերին նվիրված միջազգային գիտաժողովում (Ставрополь-Москва 2004), Լոռու մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովում (Վանաձոր 2007 թ.), ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետի 70 ամյակին նվիրված գիտաժողովում (Ե., 2005 թ.), Հայկական աշխարհագրական ընկերության 70-ամյակին նվիրված գիտաժողովում (Ե., 2006 թ.), Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում (Վանաձոր 2009 թ.), Սպիտակի երկրաշարժի 20-րդ տարելիցին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանում (Գյումրի 2009 թ.), «Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և դրա գործնական կիրառումը» թեմայով գիտաժողովում (Ե. 2009 թ.), Սիմֆերոպոլի համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի հիմնադրման 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում (Սիմֆերոպոլ 2014) և միջազգային ու հանրապետական այլ գիտաժողովներում ու սեմինարներում:

Դրատարակված աշխատանքներ: Ատենախոսության թեմայով հրատարակվել են թվով. 44 գիտական աշխատանքներ՝ ՀՀ և արտասահմանյան գիտական ամսագրերում, գիտաժողովների ժողովածուներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 6 գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված 219 անուն գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 298 էջ է, այդ թվում 46 աղյուսակ, 8 քարտեզ: Հավելվածն ընդգրկում է 16 աղյուսակ և ատենախոսության արդյունքների ներդրման վերաբերյալ հինգ տեղեկանք:

ԱՇԽԱՏԱՎԵՒ ՐԱՄԱՊՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան, պաշտպանվող հիմնադրությունները, գիտական նորույթը: Նշված են աշխատանքի փորձաքննության, գործնական նշանակության ու ներդրման և կառուցվածքի մասին:

ԳԼՈՒԽ 1. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒԽՈՒՍԱՍԽԻՐՄԱՆ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Այս գլխում քննարկվել են գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության տեսական և մեթոդական հարցերը:

1.1 Գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ծնավորման ու զարգացման պայմանները և օրինաչափությունները: Քաղաքային բնակավայրերից դուրս ընկած անբողջ բնակելի տարածքն իր բնական և մարդածին լանդշաֆտներով, բնակչությամբ և բնակավայրերով ընդունված է համարել գյուղական բնակատեղեր: Դրանց գլխավոր էլեմենտները գյուղական բնակավայրերն են: Գյուղական բնակավայրերի անբողջությունը և դրանց միջբնակավայրային կապերի ընդհանրությունը որոշակի տարածքի սահմաններում առաջացնում է գյուղական տարաբնակեցում, որը հանդիսանում է տարաբնակեցման միասնական համակարգի գլխավոր օղակներից մեկը: **Գյուղական տարաբնակեցումը ոչ քաղաքային տարածքներում բնակչության կյանքի տարածքային կազմակերպման ծև է՝ տարրեր տիպի բնակավայրերի ընդհանրության տեսքով, որոնք նախատեսված են մշտական կամ ժամանակավոր բնակության համար :** Գյուղական տարաբնակեցման հիմնական մասը կազմում է գյուղատնտեսական տարաբնակեցումը: Այդպիսին է նաև ՀՀ-ն, որտեղ գյուղերի 90 %-ից ավելին ունեն հիմնականում գյուղատնտեսական գործառույթ: Բացի այդ, միայն մայրաքաղաքում կենտրոնացված է երկրի բնակչության 1/3-ից ավելին, իսկ բնակչության թվով առաջին 7 քաղաքներում՝ 74 %-ը, 4 տարածաշրջանում՝ չկան քաղաքային բնակավայր, մի շարք քաղաքներում, որոնք տարածաշրջանային կենտրոններ են, առկա բնակչության թիվը չի անցնում 7 հազարից: **Դետևաբար, ՀՀ նման լեռնային մակերևույթ, բնական պայմանների խիստ բազմազանություն և ուրբանիզացիայի բարձր կենտրոնացվածություն ունեցող երկր-ներում տարաբնակեցման միասնական համակարգում գյուղական բնակատեղերն ու տարաբնակեցումն ունեն «ինքնուրույնության» բավական բարձր աստիճան և էական դեր են խաղում լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի զարգացման, տարածքային ու մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կայուն հասարակական զարգացման գործում:** Ուստի՝ ՀՀ գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման աշխարհագրական ուսումնասիրությունը և դրանցում տեղի ունեցող գործընթացների և զարգացման միտումների բացահայտումն ունեն գիտամեթոդական և կիրառական կարևոր նշանակություն:

Գյուղական բնակավայրերի մասին աշխարհագրական ուսումնասիրությունները խորացել և զարգացել են աշխարհագրական գիտության զարգացման հետ միաժամանակ և արևմուտքի և ռուսական աշխարհագրական դպրոցներում: Գյուղական բնակավայրերի ուսումնասիրման տեսական և մեթոդական հարցերը մշակվել են Յու.Սաուշ-կինի, Լ.Ուստինովյան, Ռ.Կաբոյի, Ն.Լյալիկովի, Ս.Կովալյովի, Ա.Ալեքսսի, Վ. Զառշվիլու և այլոց կողմից: Միաժամանակ հասարակության տնտեսական, սոցիալական և քաղաքական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները նոր խնդիրներ և պահանջներ են դնում նաև գյուղական տարաբնակեցման առջև: Փոխվում են առանձին գյուղական բնակավայրերի և դրանց խնդրավորումների ձևավորման և զարգացման հնարավորությունները:

Արտադրության զարգացումը որոշում է տարաբնակեցման փոփոխությունների ընդհանուր ուղղությունը և գյուղական տարաբնակեցման օրինաչափություններից մեկը նրանում տեղի ունեցող փոփոխությունների հետ մնալը է տնտեսության զարգացումից: Տարաբնակեցման «ձգտումը» հասարակության պահանջներին հանդիսանում

Է տարաբնակեցման ամբողջ ցանցի և առանձին բնակավայրերի զարգացման գլխավոր շարժիչ ուժը:

Գյուղական բնակատեղերի վրա բնական միջավայրն ազդում է ոչ միայն տնտեսության միջոցով, այլ նաև օգալի է բնական համալիրի տարրերի անմիջական, տեխնիկական ազդեցությունը։ Այդ ազդեցությունը փոփոխվում է պատմականորեն և կախված է տնտեսության զարգացման մակարդակից։ Գյուղական տարաբնակեցումն իր բազմազանությամբ կարող է ընկալվել միայն նրա նկատմամբ պատմական մոտեցմամբ, քանի որ այն ձևավորվել է տարբեր ժամանակներում և իրենից ներկայացնում է պատմական զարգացման արդյունքը։

Գյուղական տարաբնակեցման և առանձին բնակավայրերի զարգացման օրինաչափություններից է նաև ՏԱԴ ներուժի օգտագործումը և իրականացումը։ Չնայած որ դիրքը պատմականորեն փոփոխվում է, սակայն այն որպես գյուղական բնակավայրի կամ տարաբնակեցման զարգացման գործոն գոյություն ունի մշտապես։ ՏԱԴ-ի դերը գյուղական բնակատեղերի համար առավել մեծ է ՀՀ-նման լեռնային երկրներում, որտեղ մակերևույթի մասնատվածությունը, հիպոսմետրիկ ցուցանիշը և գյուղական բնակավայրի տեղադրությունը դժվարացնում են միջբնակավայրային կապերի զարգացումը։

Գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման առանձնահատկություններն իրենց դերն ունեն հասարակության տարածքային կազմակերպման գործում։ Բնակավայրերի կենտրոնացվածությունը կամ էլ ցրվածությունը ստեղծում են տարբեր պայմաններ սպասարկման ծառայությունների և մշակութային կյանքի կազմակերպման համար։

Գյուղական բնակատեղերի աշխարհագրական ուսումնասիրություններում ելակետային դեր ունեն գիտատեսական հետևյալ դրույթները։

1. գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ձևավորումն ու զարգացումը տեղի է ունենում պատմական, բնատնտեսական, սոցիալ-քաղաքական, աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, տարածաշրջանային և այլ գործոնների, ինչպես նաև հասարակական կյանքում տեղի ունեցող մի շարք երևույթների ներգործության տակ,
2. գյուղական բնակատեղերում տեղի ունեցող գործընթացներն առանձնահատուկ գործով են դրսևորվում լեռնային երկրներում և տարածաշրջաններում, քանի որ վերջիններս առավել զգայուն են բնատնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, քաղաքական, աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, էկոլոգիական և տեղային այլ գործընթացներում տեղի ունեցած փոփոխությունների նկատմամբ,
3. ուրբանիզացիային խիստ օջախայնություն ունեցող լեռնային երկրներում գյուղական բնակատեղերի զարգացման գործընթացներում առավել մեծ դեր ունեն ոչ թե ուրբանիզացիոն, այլ տեղային գործոնները (բնաշխարհագրական, պատմապատճենական, սոցիալ-կենցաղային, տարածաշրջանային և այլն),
4. բնական պայմանների խիստ բազմազանություն և ուրբանիզացիայի բարձր օջախայնություն ունեցող լեռնային երկրների տարաբնակեցման մեջ գյուղական բնակատեղերն ունեն «ինքնուրույնության» բարձր աստիճան և եական դեր են խաղում լեռնային տարածքներում գյուղական բնակավայրերի զարգացման, տարածքային ու մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, կայուն զարգացման գործում։

1.2 Գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության հիմնական խնդիրները և մեթոդները: Գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններում առաջնային խնդիրներից մեկը տեղեկատվության հավաքման, մշակման և ներկայացման եղանակներն են, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն «ցույց տալ», այլ «բացատրել» և «զնահատել» գոյություն ունեցող գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման պատկերը և դրանց բազմազանությունը։ Գյուղական բնակավայրերի աշխարհագրա-

կան հետազոտությունը ենթադրում է տարաբնակեցման տարբեր էլեմենտների վերլուծություն, որոշակի առանձնահատկությունների բացահայտում և ընդհանրացում, շրջանային տարրերությունների և առանձնահատկությունների բացահայտում և շրջանացում:

Լեռնային երկրների գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման աշխարհագրական ուսումնասիրություններում առավել տիպական ուղղությունը «տարածաշրջանային սինթեզն»՝ որոշակի տարածքի տարաբնակեցման ամբողջական բնութագրման ձևով: Միաժամանակ, տարաբնակեցման առանձին կողմերի վերլուծությունը և կապերն օրինաչափորեն հանգեցնում են նաև սինթեզի այլ ձևերի անհրաժեշտությանը: Այսինքն՝ գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման առանձին էլեմենտների և տարածքային միավորների ամբողջական պատկերի բացահայտումը հնարավոր է միայն վերլուծության և սինթեզի տարբեր ձևերի գորգակցմամբ:

Տարածքային այլ համակարգերի նման գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցմանը ևս բնորոշ են ներքին և արտաքին կապերի բազմազանությունը: Այդ իմաստով մեթոդաբանական և մեթոդական կարևոր հարցերից է սահմանել էլեմենտների այն շրջանը, որոնց ուսումնասիրումն ամբողջությամբ անհրաժեշտ է և բավարար տարածքի գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման համալիր վերլուծության համար:

ՀՀ գյուղական բնակավայրերի ուսումնասիրության երկարամյա փորձը և ստացված արդյունքները հիմք են տալիս պնդելու, որ լեռնային երկրների գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններում առանձնակի կարևորություն են ստանում բնակատեղերի ձևավորման բնաշխարհագրական, պատմական և սոցիալ-տնտեսական նախադրյալները, բնակավայրերի մարդաշատության, բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատուկ գծերը լեռնային տարածքներում, բնակավայրերի ձևաբանական, գործառությային (արտադրական) և ժողովրդագրական տիպերը, գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը, տարածքի բնակեցման և տարաբնակեցման տիպերը: Գիտամեթոդական և կիրառական տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունի լեռնային երկրների գյուղական տարաբնակեցման համալիրային տիպաբանության և շրջանացման հարցերի քննարկումը: Դրանք հանդիսանում են գյուղական բնակավայրերի աշխարհագրական հետազոտություններն ընդհանրացնող և զարգացման նիտումները բացահայտող ուղղություններ: Առանձնակի դեր ունի գյուղական բնակչության և բնակավայրերի շարժընթացի ժամանակակից միտումների, զարգացման և վերափոխման վրա ազդող հիմնական գործուների ուսումնասիրումը և գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման ուղիների բացահայտումը:

ՀՀ-ի ժամանակակից սոցիալ-տնտեսական և քաղաքացիարիագրական իրավիճակը և առանձնապես սահմանամերձ ու ծայրամասային և բարձրլեռնային գյուղական բնակավայրերում երկրի համար ստեղծված սոցիալ-ժողովրդագրական խիստ աննպաստ պայմանները պահանջում են մեր աշխատանքում վեր հանել նաև տարածաշրջանների գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և դրանց աշխարհագրական տարրերությունները:

1.3 Շրջանացումը և համալիրային տիպայնացումը որպես ՀՀ-ի նման լեռնային երկրների գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման հեռանկարային պյանավորման ու զարգացման և կառավարման հիմք: Լեռնային երկրներում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման շրջանները և դրանց մեջ մտնող համալիրային տիպերն իրենց բովանդակությամբ ավելի հարուստ են, ունեն տաքսոնոմիական տարբեր կարգի և քանակի միավորներ: Այդ ենթակարգությունն ունի այսպիսի կառուցվածք. տարաբնակեցման շրջան, տարաբնակեցման տեղական տիպ և ենթատիպ:

Լեռնային երկրներում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման շրջանացման սխեման, առանձնացված տարաբնակեցման միավորները հանդիսանում են հիմք տարաբնակեցման տարածաշրջանային և տեղական սխեմաների մշակման, հեռանկարային պյանավորման ու զարգացման և կառավարման համար: Նման եզրահան-

գումը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

1. Ցանկացած տարածքում հասարակության տարածքային կազմակերպման հենքը հանդիսանում է առկա տարաբնակեցման ցանցը,
2. Գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման համալիրային տիպերը, ենթատիպերը և դրանց ընդհանրությունը որոշակի տարածքի սահմաններում (տարաբնակեցման շրջանները) լեռնային երկրների բնատնտեսական առանձնակի պայմաններում ստեղծված այնպիսի միավորներ են, որոնց ձևավորումը և զարգացումը պայմանավորում է տվյալ տարածքի միասնական տնտեսական օգտագործում և բնակեցում: Հետևաբար, դրանք հանդիսանալով տարաբնակեցման միասնական համակարգի ենթակարգության տարբեր մակարդակի վրա գտնվող օդակներ, կարող են ծառայել հիմք տարաբնակեցման հեռանկարային պլանավորման ու զարգացման և կառավարման համար:

1.4 Գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման դերը լեռնային երկրների կայուն հասարակական զարգացման գործում: Լեռնային երկրներն ունեն տարածքային և բնական այլ ռեսուրսների նշանակալից պաշարներ, որոնց դերն ու կարևորությունը գնալով ավելի է մեծանում: Այժմ, երբ մարդկությունն ընդունել է կայուն հասարակական զարգացման հայեցակարգը, ողջ հասարակության սոցիալական, տնտեսական և քաղաքական կայունության պահպանման և հետագա առաջընթացի համար իրենց առանձնահատուկ դերն ունեն լեռնային երկրներն ու տարածաշրջանները: Դրանցում կայուն հասարակական զարգացում ապահովելու, տարածքային, մարդկային և մնացած ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նախապայմաններից մեկը տարաբնակեցման համակարգի պահպանումն ու կատարելագործումն է: Գյուղական բնակատեղերում ուրբանացման գործընթացների տարածումը և խորացումը:

ՀՀ-ն առանձնանում է լեռնային երկրներին բնորոշ տարաբնակեցման առանձնահատկություններով և հիմնախնդիրներով: ՀՀ-ում ևս լեռնային տարածաշրջանների կայուն հասարակական զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկը տարաբնակեցման համակարգի կատարելագործումն ու զարգացումն է: Վերջինս հնարավորություն կտա նպատակային և արդյունավետ օգտագործել ՀՀ առանց այն էլ սահմանափակ տարածքային և հողային ռեսուրսները:

1.5 Գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման առանձնահատկությունները և զարգացման օրինաչափությունները ՀՀ-ի նման լեռնային երկրներում : Հաշվի առնելով նախորդ հեղինակների (Ավագյան Գ., Գրգեարյան Յ., Մանասյան, Վ.Զառշվիլի, Լ.Ուստինովա և այլոց) աշխատանքները և մեր ուսումնասիրությունների արդյունքները կարելի է առանձնացնել լեռնային երկրների գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

1/ լեռնային երկրներում գյուղական բնակչության և բնակավայրերի հիմնական մասի կենտրոնացվածությունը նախալեռնային հարություններում, գետահովիտներում, լեռնային գովազդությունների ցածրադիր հովիտներում և սարահարթերում, 2/ գյուղական բնակչության և բնակավայրերի խիստ անհավասարաշափ բաշխվածությունը տարածում, 3/ գյուղական բնակավայրերի մարդաշատության մեծ տատանումները, 4/ ժողովրդագրական գործընթացների յուրահատկությունը, 5/ գյուղական բնակչության գրադարձության և բնակավայրերի գործառության մեծ տարբերությունները, 6/ գյուղերի արտաքին տեսքի և մորֆոլոգիայի բազմազանությունը, 7/ գյուղական բնակավայրերի միջև կապի թուլությունը, 8/ ծովի մակարդակից ունեցած բարձրության համեմատ գյուղական բնակչության, գյուղերի միջին մարդաշատության և բնակավայրերի խտության ոչ միանշանակ փոփոխությունը, 9/ բարձրության միևնույն գոտու սահմաններում գյուղական բնակչության և բնակավայրերի խտության և տեղաբաշխման զգալիորեն մեծ տարբերությունները, 10/ համեմատաբար փոքր տարածքի սահմաններում տարաբնակեցման ձևերի և համալիրային (տեղական) տիպերի բազմազանությունը:

1.6 ՀՀ գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ուսումնասիրվածության վերլուծություն և գնահատում: ՀՀ գյուղական բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրությունները սկսվել են 1950-ական թվականների վերջերին: 1960-1980-ական թվականների վերջերին հրատարակված Հ.Գրգեարյանի, Խ.Ավետիսյանի և Գ.Ավագյանի աշխատանքներում քննարկվել են ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման, գյուղերի ծևավորման ու զարգացման, դրանց մարդաքանակի, տեղադրման, արտաքին տեսքի ու կառուցապատճան առանձնահատկությունների շարժընթացի հարցերը: ՀՀ գյուղական բնակավայրերի տիպոլոգիայի, գյուղական տարաբնակեցման վերափոխման գործոնների և տարաբնակեցման գոտիավորման հարցերին են նվիրված Հ.Ավետիսյանի մի քանի հոդվածներ: ՀՀ լեռնային շրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման առանձին հարցեր քննարկված են Ն.Մանասերյանի, Ս.Աղոնցի, Գ.Կիրակոսյանի, Ռ.Մարգարյանի և այլոց աշխատանքներում: Մայրաքաղաքային ռեգիոնում գյուղական տարաբնակեցման շարժընթացի և կառուցվածքի հարցերը քննարկված են Ա.Վալեսյանի և Ս.Մանասյանի աշխատանքներում: ՀՀ տարաբնակեցման համակարգի աշխարհագրական վերլուծության ընդհանուր համատեքստում գյուղական տարաբնակեցման առանձին խնդիրների վերլուծությանն անդրադարձել է Ս.Մանասյանը: Վերջին մեկուկես տասնամյակում ՀՀ և առանձին մարզերի ու տարածաշրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման, տարաբնակեցման կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների, առկա միտումների և դրանց հետևանքների վերլուծությանն են նվիրված մեր կողմից հրատարակված մի շարք հոդվածներ: ՀՀ գյուղական տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության հիմնահարցերն առաջին անգամ ամփոփ քննարկված են Ա.Պոտոսյանի «ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը» (Ե. 2013) գրքում: Գյուղական տարաբնակեցման քարտեզագրման հարցերով զբաղվել են Հ.Գրգեարյանը, Ս.Դույցանը, Գ.Ավագյանը, Լ.Վալեսյանը, Ս.Մանասյանը և Ա.Պոտոսյանը:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏԻՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

2.1 Տարածքի բնակեցման պատմաշխարհագրական առանձնահատկությունները: ՀՀ բնապատմական տարբեր մարզերի ու տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման բազմազանությունն ու ինքնատիպությունը պայմանավորված է նաև պատմական անցած ժամանակների իրադարձություններով: Չնայած պատմական անցած ժամանակներում տարաբնակեցման կրած նշանակալից փոփոխություններին, այդուհանդերձ բնական և պատմապատճենագրական գործոններով պայմանավորված ՀՀ տարածքում առանձնանում են իինգ խոշոր գոտիներ, որոնք միմյանցից տարբերվում են տարաբնակեցման բնապատմական առանձնահատկություններով: Դրանք են. 1) Փոքր կովկասի արտաքին, գետահովիտներով մասնատված, անտառային լանջերով լեռնաշղթաների գոտի, 2) Փոքր կովկասի ներքին, չափավոր մասնատված, անտառներով աղբատ, մարգագետնային լանջերի գոտի, 3) Յրաբխային սարահարթերի և միջլեռնային գոգավորությունների մարգագետնատափաստանային գոտի, 4) Արարատյան դաշտի և հարակից ցածրադիր սարավանդների կիսաանապատային գոտի, 5) Փոքր կովկասի մերձարաքսյան խիստ մասնատված լեռնաշղթաների անտառազուրկ կամ ֆրիզանա-քսերոֆիլ բուսականության լանջերի գոտի:

Պատմական իրադարձությունների բերումով ՀՀ ժամանակակից գյուղական տարաբնակեցման հենքը հիմնական գծերով սկսել է ծևավորվել 19-րդ դարի երկրորդ քառորդից, երբ Արևելյան Հայաստանի մեծ մասը միացավ Ռուսաստանին: Արդեն 1831 թ. ՀՀ ներկայիս տարածքում կար 710 բնակեցված գյուղ և մեկ քաղաք:

Աղյուսակ 1

ՀՅ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժմացը 1831-1926 թթ.¹

Հետագա տասնամյակների ընթացքում բնակչության բնական ու մեխանիկական աճի, գյուղական նոր բնակավայրերի ստեղծնան և նախկինների վերականգնման շնորհիվ հիմնական գծերով ձևավորվեց ՀՀ գյուղական տարաքանակեցման հիմքը:


2.2 Տարածքի բնակեցման սոցիալ-տնտեսական գործուները: Գյուղական տարածակեցման ծևավորումը: Սկսած 1830-ական թվականներից Արևելյան Հայաստանում խրախուսվում է գյուղական բնակավայրերի զարգացման, ավերված գյուղերի վերականգնման և նորերի կառուցման բոլոր միջոցառումները: Արարատյան դաշտում և հարակից տարածքներում վերակառուցվում են ոռոգիչ ցանցերը, պարբերաբար յուրացվում են կիսաանապատային հողատարածքները, ընդարձակվում են խաղողի, մրգատու այգիների, տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածքները: Նախալեռնային և լեռնային տարածքներում զարգանում են երկրագործության և անասնապահության տարրեր ճյուղեր: Այդ ամենին զուգահեռ զարգացում են ունենում նաև առևտուրը, ինչպես նաև գյուղական բնակատեղերի ծևավորման և զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունեցող խճուղային ճանապարհների և երկաթուղագծերի շինարարությունը: Խորհրդային տարիներին ՀՀ գյուղական բնակատեղերի զարգացումը տեղի է ունեցել սոցիալիստական պետական տնտեսական համակարգի պայմաններում, որը նպաստում էր խոշոր գյուղային տարաբնակեցման ծևավորմանը:

Վերջին երկու տասնամյակում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները միանգամայն նոր սոցիալ-տնտեսական պայմաններ են ստեղծել ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացման համար:

2.3 Ենթակառուցվածքային և աշխարհաքաղաքական գործոնները: ՀՅ գյուղական տարաբնակեցման համար իրենց կարևոր դերն ունեն նաև Ենթակառուցվածքային տարրերը, աշխարհագրական դիրքը, վարչատարածքային բաժանումը, արտաքին քաղաքական գործոնները և սահմանամերձ գոտին: Մեր լեռնային տարածքում գյուղական բնակավայրերի համար բացառիկ է տրանսպորտային ցանցի, մասնավորապես՝ ավտոմոբիլայնի դերը, որը նշանակալից զարգացում է ունեցել հատկապես խորհրդային տարիներին: ՀՅ-ում խորհրդային տարիների տնտեսական և ժողովրդագրական զարգացումներին համընթաց տեղի է ունեցել նաև սոցիալական Ենթակառուցվածքների զարգացումը, որոնք իրենց դերն են ունեցել ՀՅ գյուղական բնակավայրերի զարգացման և տարաբնակեցման համակարգաստեղծ գործիքազներում:

Լեռնային կտրատված մակերևույթ ունեցող ՀՀ-ում վարչատարածքային բաժանման սխեման, միավորների ընդգրկած տարածքի մեջությունը և գյուղական բնակավայրերի վարչական կարգավիճակն իր ազդեցությունն է թողնում գյուղական բնակավայրերի զարգացման վրա: Ներկայումս ՀՀ հարյուրավոր գյուղերի համար զարգացման գործոն է դարձել աշխարհագրական դիրքը, մասնավորապես՝ սահմանամերձ գոտում գտնվելը:

¹ Այսուակը կազմած է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы» Е., 1962 թ. ժողովածուի տվյալների հիման վրա:



Ակ. 1 ՀՀ գյուղական բնակավայրերի թիվը և միջին մարդաշատությունը 1831 թ-ին

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՈՐՊԵՍ ԼԵՇՈՆԱՅԻՆ ԵՐԿՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱ
ԲՆԱԿԱՏԵՂԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ**

3.1 Գյուղական բնակատեղերի ու տարարնակեցման ձևավորման բնաաշխարհագրական նախադրյալները: ՀՀ-ում լեռնային տարածքի բարդ ռելիէֆային պայմանները միջնորդվելով բնակչության տնտեսական գործունեության պայմաններով կանխորոշում են տարածքի տնտեսական ներուժը, որն էլ իր հերթին ակտիվորեն ներգործում է գյուղական տարարնակեցման բնույթի վրա:

Աղյուսակ 2

**ԴՐԱ գյուղական տարաբնակեցումը բնութագրող մի քանի ցուցանիշներ
ըստ մարզերի (2012 թ.)¹**


Վարչական մարզերը	Գյուղական բնակչության խտությունը (մարդ/քառ.)						Գյուղական բնակչության խտությունը (մարդ/քառ.)			
	Հիշշատ գյուղներ ու բնակչության խտությունը (մարդ/քառ.)									
1.Արագածոտն	9.3	79	109.6	9.3	116	12.3	39	50	4.2	5.3
2. Արարատ	7.0	75	198.6	16.9	94	10.0	94	125	4.5	6.0
3.Արմավիր	4.2	78	185.0	15.7	95	10.0	147	188	7.6	9.8
4.Գեղարքունիք	18.0	65	163.6	13.9	92	9.8	30	46	1.7	2.6
5. Կոտայք	7.0	77	123.8	10.5	62	6.6	59	76	3.0	3.8
6. Շիրակ	9.0	86	112.4	9.5	128	13.6	42	49	4.8	5.6
7. Լոռի	12.7	66	116.9	9.9	116	12.3	31	46	3.0	4.6
8. Սյունիք	15.1	74	49.4	4.2	127	13.5	11	15	2.8	3.8
9. Վայոց ձոր	7.8	90	36.7	3.1	51	5.4	16	17	2.2	2.4
10. Տավուշ	9.1	41	82.0	7.0	61	6.5	30	73	2.2	5.4
Երևան	0.8	-	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ-ում	100	71	1178.3	100.0	942	100	39.0	55.0	3.1	4.4

ՀՅ տարածքի փոքր չափը, խիստ արտահայտված լեռնային բնույթը, մակերևույթի հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածությունը, տարածքի զգալի մասի բացարձակ մեծ բարձրությունները և թեքությունները, կլիմայական պայմանները, ջրային և հողային ռեսուրսների անհավասարաչափ բաշխումը, սեյսմիկ ակտիվությունը, մի շարք շրջաններում սողանքային վտանգավորությունը, երկրի մակերևույթին մոտ գտնվող գրուտային ջրերը և ակտիվ գործող այլ բնաաշխարհագրական երևույթները, զգալիորեն նեղացնում են ՀՅ բնակեցման արեալը և իրենց անմիջական և միջնորդավորված աղդեցությունն են թողնում գյուղական բնակավայրերի ձևավորման և հետագա զարգացման վրա (աղ. 2):

¹ Աղյուսակը կազմած է ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության տվյալների հիման վրա:

² Գյուղական բնակչության թիվը տրված է ՀՀ ազգային Վիճակագրական Ծառայության ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա:

³ Մարզերի գյուղական բնակվայրերի թիվը տրված է առանց քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող թվով 9 գյուղի:



Նկ. 2 ՅՅ գյուղական բնակչության խոտությունը և միջին մարդաշատությունը, 2012 թ.

3.2 Գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման բնորոշ առանձ-նահատկությունները: ՀՀ-ում գյուղական բնակչության և բնակավայրերի հիմնական մասը կենտրոնացված են նախալեռնային հարթություններում, գետահովիտներում, լեռնային գոգավորություններում և սարահարթերում: Արարատյան դաշտում և այն եզ-րավորող նախալեռնային գոտում (ցամաքային տարածքի 17.8 %-ը) տեղաբաշխված է ՀՀ գյուղական բնակչության 45 %-ը, իսկ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում՝ (ՀՀ ցա-մաքային տարածքի 24.3 %-ը) ընդամենը 7.3 %-ը: Տարածքի 67 %-ի վրա գյուղական բնակչության խտությունը ցածր է ՀՀ միջին ցուցանիշից: Բացարձակ բարձրություննե-րի մեջ տատանումների և հորիզոնական ու ուղղաձիգ խիստ մասնատվածության պատճառով ՀՀ զգալի շրջաններ դուրս են մնում բնակեցումից և գյուղատնտեսական օգտագործումից: ՀՀ-ում, որպես օրինաչափություն, գյուղական բնակչության բարձր խտության շրջաններում բարձր է նաև գյուղական բնակավայրերի խտությունը, իսկ ծայրամասային և լեռնային շրջաններում՝ ցածր:

3.3 Գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխումն ըստ բարձրու-թյան գոտիների: ՀՀ-ում լեռնային երկրներին հիմնականում բնորոշ օրինաչա-փությունը՝ բարձրության ավելացմանը համեմատ գյուղական բնակչության և բնակա-վայրերի թվի նվազումը չի պահպանվում: Ոելիեֆային նպաստավոր պայմաններ ունե-ցող տարածքները, չնայած գտնվում են ծովի մակարդակից տարբեր բարձրություննե-րի վրա, առանձնանում են գյուղական բնակչության առավել բարձր խտությամբ: Միա-ժամանակ, ցածրադիր առանձին տարածքներում ռելիեֆային ոչ բարենպաստ պայ-մանների պատճառով գյուղական բնակչության թիվը և խտությունը փոքր է: ՀՀ-ում գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկություննե-րից է նաև այն, որ բարձրության միևնույն գոտու սահմաններում բնակչության և բնա-կավայրերի տեղաբաշխման և խտության մեջ տարբերություններ կան: Բարձրության 800-1000 մ գոտում գյուղական բնակչության 92 %-ից ավելին բաժին է ընկնում Արմա-վիրի և Արարատի մարզերին: Ըստ բարձրության գոտիների ՀՀ գյուղական բնակչութ-յունն ավելի հավասարաչափ է տեղաբաշխված քան ամբողջ բնակչությունը: Եթե ՀՀ բնակչության մոտ 54 %-ը ապրում է 800-1000 մ բարձրության գոտում, ապա գյուղա-կան բնակչության բաժինն այդ գոտում կազմում է 34 %: Կամ՝ 1800-2000 մ բարձրութ-յան գոտում ապրում է ՀՀ բնակչության 8,8 %-ը, իսկ գյուղական բնակչության՝ 16 %-ը:

3.4 Գյուղական բնակավայրերի մարդաշատության առանձնահատկությունները: Լեռնային երկրներում գյուղական տարաբնակեցման առանձնահատուկ կողմերից են նաև բնակավայրերի մարդաշատության մեջ տարբերությունները: Դրանք ՀՀ-ում պայ-մանավորված են բնատնտեսական, ժողովրդագրական, սոցիալ-մշակութային, քա-ղաքաշինական և այլ գործոններով, որոնք ՀՀ տարբեր տարածաշրջաններում տարբեր կերպ են դրսևորվում: ՀՀ-ում ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական բնակա-վայրերի տարբեր խնբերի միջև բնակչության բաշխման տարբերությունը բավականին մեծ է: Գյուղերի ընդհանուր թվի 11.7 %-ին (3000-ից ավելի մարդ) բաժին է ընկնում գյուղական բնակչության 39.5 %-ը, իսկ մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերին (գյուղերի 34.4 %-ին) ընդամենը՝ 4.7 %-ը: ՀՀ-ում տեղանքի բարձրությունով պայմանավորված գյուղերի մարդաշատության փոփոխման որևէ օրինաչափություն չկա: Այն առավելա-պես կախված է տեղանքի մասնատվածության և թեքությունների աստիճանից:

Աղյուսակ 3

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՆՏ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ (2012 թ.)

Բնորդության գոտիները (մ) ըստ բնակչության տուածան (%) ¹	Բնորդության գոտիներ (%) ¹	Բնակավայրերի քանակը			Բնակչության թվաքանակը ²			Բնակչության խտությունը /մարդ/քկմ/			Գյուղական բնակապայրերի խտությունը			
		Ընդամենը		Քաղաքային	Գյուղական	Ընդամենը		Քաղաքային	Գյուղական	Աճուրդ	Գյուղական բնակչություն	Աճուրդ	Համայնքային բնակչություն	
		թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%					
ԱՀՅա 400	0.1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
400-600	0.8	8	0.8	2	4.1	6	0.6	13545	0.4	7400	0.3	6145	0.5	56
601-800	1.2	41	4.1	3	6.1	38	4.0	70754	2.1	27900	1.3	42854	3.4	210
801-1000	8.3	209	21.1	11	22.4	198	21.0	1791024	53.8	1372200	65.5	418824	34.0	754
1001-1200	6.2	81	8.2	4	8.2	77	8.2	145206	4.4	39200	1.9	106006	8.6	80
1201-1400	8.3	87	8.8	9	18.4	78	8.3	360246	10.8	244400	11.7	115846	9.4	156
1401-1600	9.4	151	15.2	4	8.2	147	15.6	311019	9.4	169200	8.1	141819	11.5	116
1601-1800	10.4	151	15.2	8	16.3	144	15.2	272031	8.2	135800	6.5	136231	11.1	89
1801-2000	12.8	159	16.1	7	14.3	152	16.2	290320	8.7	94900	4.5	195420	15.9	79
2001-2250	14.6	98	9.9	1	2.0	97	10.3	73538	2.2	5200	0.2	68338	5.5	18
2251-ՀՕ ԱՀՅ հօն	27.9	6	0.6	-	-	6	0.6	1690	0.0	-	-	1690	0.1	0.0
ԱՀՅ ¹³ Ա»Յ	100	992	100	49	100	943	100	3329173	100.0	2096000	100.0	1233173	100.0	110
														39
														25 ³
														4.0 ³

¹ Ակզենտադրություն՝ Погосян Դ. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР. Е. 1986. էջ 16:

² Հաշվարկները կատարվել են «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով», Ե., 2012, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

3. Հաշվարկած է մինչև 2500 մ բարձրությունն ընկած տարածքի հաշվով:

Աղյուսակ 4

**ՀՀ ՍԱՐՁԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ (ԱՊԱՍՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԴԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԵջ ԱՏՎՈՐ ԳՅՈՒՂԵՐԻ, 2012 թ.)¹**

ՄԱՐԶԵՐ	Բարձրության գոտիներ																			
	մինչև 800 մ		801-1000		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2001-2200		2200-ից բարձր			
	ա	թ	ա	թ	ա	թ	ա	թ	ա	թ	ա	թ	ա	թ	ա	թ	ա	թ		
Արագածոտն	-	-	2	1999 0,5	14	32506 30.7	10	20550 17.7	17	13698 9.7	18	11380 8.4	28	22424 11.5	26	16835 24.6	1	1332 78.8	116 3	120724
Արարատ	-	-	82	188355 45.0	4	11798 11.1	2	1025 0.9	-	-	4	1768 1.3	3	1073 0.5	-	-	-	-	95 1	204019
Արմավիր			89	198944 47.5	6	10277 9.7	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	95 0	209221
Գեղարքունիք	-	-	-	-	2	771 0.7	1	1079 0.9	4	338 0.2	6	6695 4.9	43	121427 62.1	33	43025 62.9	3	152 9.0	92 4	173487
Լոռի	7	7920 16.1	3	3721 0.9	10	10457 9.9	25	26938 23.3	37	21709 15.3	30	37412 27.5	4	5508 2.8	-	-	-	-	116 4	113665
Կոտայք	-	-	-	-	5	19555 18.4	12	40803 35.2	21	35885 25.3	16	22089 16.2	5	4682 2.4	3	790 1.2	-	-	62 0	123804
Շիրակ	-	-	-	-	-	-	1	505 0.4	33	47796 33.7	30	34452 25.3	38	32632 16.7	25	5719 8.4	1	206 12,2	128 5	121310
Սյունիք	6	2035 4.2	6	796 0.2	26	6389 6.0	19	7379 6.4	18	9905 7.0	26	16949 12.4	20	4655 2.4	6	1417 2.1	-	-	127 12	49525
Վայոց ձոր	-	-	2	3150 0.7	3	4829 4.6	3	10154 8.8	15	11051 7.8	12	5465 4.0	11	3019 1.6	4	552 0.8	1	0	51 7	38220
Տավուշ	31	39044 79,7	14	21859 5,2	7	9424 8,9	5	7413 6.4	2	1437 1.0	2	21 0.0	-	-	-	-	-	-	61 2	79198
ՀՀ-ում	44	48999 100	198	418824 100	77	106006 100	78	115846 100	147	141819 100	144	136231 100	152	195420 100	97	68338 100	6	1690 100	943 38	1233179

¹ Աղյուսակը կազմած է «ՀՀ մարզերը և երևան քաղաքը բվերով», Երևան 2012 թ., վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

2. Համարիչում՝ տվյալ բարձրության գոտում գյուղական բնակավայրերի բնակչության ընդհանուր թիվը, հայտարարում՝ նույնը տոկոսով:

3. Համարիչում՝ տվյալ մարզում գյուղերի ընդհանուր թիվը, հայտարարում՝ մշտական բնակչություն չունեցող գյուղերի թիվը

ա) գյուղերի թիվը բարձրության տվյալ գոտում, բ) գյուղական բնակչությունը բարձրության տվյալ գոտում:

Աղյուսակ 5

**ՀՀ գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունն ըստ բարձրության
գոտիների (1.01. 2012 թ.)**

Բարձրության գոտիները	Բարձրության գոտու տարածքն ընդհանուրից (%-ներով) ¹	Գյուղերի նդհանուր բնակչության բաժինը		Բնակչութ- յան բաժինը ընդհանուրից %-ներով	Գյուղերի միջին մարդա- շատութ- յունը
		Ընդա- մենը	Բնակչութ- յուն չունեցող գյուղեր		
Մինչև 800	2,1	44	-	4.0	1114
800-1000	8.3	198	1	34.0	2126
Մինչև 1000	10.4	242	1	38.0	1933
1000-1200	6.2	77	1	8.6	1376
1200-1400	8.3	78	4	9.4	1565
1000-1400	14.5	155	5	18.0	1479
1400-1600	9.4	147	6	11.5	1006
1600-1800	10.4	144	10	11.1	1017
1400-1800	19.8	291	16	22.6	1011
1800-2000	12.8	152	11	15.8	1386
2000-2250	14.6	97	3	5.5	727
2250-ից բարձր	27.9	6	2	0.1	423
Ընդամենը	100.0	943	38	100.0	1363

3.5 Գյուղական բնակավայրերի գործառութային կառուցվածքը և արտադրական տիպերը: ՀՀ-ում գրեթե բոլոր գյուղերում տիրապետող է գյուղատնտեսական գործառությը: Դրանց ապրանքային արտադրանքի կառուցվածքի վերլուծության միջոցով առանձնացվել է գյուղական բնակավայրերի արտադրական առավել բնորոշ 9 տիպ: Վերջին երկու տասնամյակում շուկայական տնտեսական հարաբերությունների խորացումը և զարգացումը կարող է փոփոխություններ մտցնել ՀՀ գյուղական բնակավայրերի արտադրական տիպերի մեջ: ՀՀ-ի համար առավել բնորոշ են տավարաբուծական-ոչխարաբուծական, տավարաբուծական, տավարաբուծական-դաշտավարական, բանջարաբուծական, բանջարաբուծական-խաղողագործական, խաղողագործական, ծխախոտագործական -տավարաբուծական և այգեգործական մասնագիտացման գյուղերի արտադրական տիպերը:

3.6 Գյուղական բնակավայրերի ծևաբանական (մորֆոլոգիական) առանձնահատկությունները և աշխարհագրական դիրքը: Լեռնային երկրներում գյուղական տարաբնակեցման առանձնահատկություններից է նաև գյուղերի արտաքին տեսքի և մորֆոլոգիական բազմազանությունը: ՀՀ-ում բացի ռելիեֆային խիստ բազմազանությունից դրան նպաստել են նաև պատմապատճենական առանձնահատկությունները: ՀՀ համար առավել բնորոշ է գյուղական բնակավայրերի մորֆոլոգիական 17 տիպ:

3.7 Գյուղական բնակչության բնական շարժի տարածաշրջանային տարրերությունները և հիմնախնդիրները: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ

¹ Սկզբնադրյուր՝ Պօգօսյան Դ. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Арм. CCP, Е. 1986, стр. 16:

² Ըստ՝ «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով», Ե., 2012, վիճակագրական ժողովածուի տվյալների:

1. Վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի գործընթացներում տեղի են ունեցել նկատելի փոփոխություններ, որոնք առավել ինտենսիվ բնույթ են ունեցել 1990-ական թվականներից հետո՝ պայմանավորված երկրում տեղի ունեցած քաղաքական, վարչական, տնտեսական և սոցիալ-մշակութային վերափոփոխումներով,

2. Գյուղական բնակչության ծնելիության բացարձակ և հարաբերական ցուցանիշի նվազման պայմաններում տեղի է ունեցել մահացության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում, որը հանգեցրել է գյուղական բնակչության բնական հավելածի կտրուկ նվազմանը հատկապես 1990-2013 թթ. ընթացքում: Եթե 1960-1990 թթ. այն նվազել է 1,9, ապա 1990-2013 թթ.՝ 4,3 անգամ,

3. Հնայած որ վերջին տարիների ընթացքում դիտվում է գյուղական բնակչության բնական հավելածի ավելացում, սակայն այն հիմնականում տեղի է ունեցել ծնելիության ցուցանիշի աճի շնորհիվ, քանի որ մահացության գործակիցը ոչ միայն չի նվազել, այլ 2000 թ. համեմատությամբ ավելացել է 1,5 %-ով,

4. ՀՀ-ում կենտրոնական դիրք, հիմնականում հարթավայրային մակերևույթ, ոռոգելի հողատարածքների ավելի մեծ մակերես, ենթակառուցվածքային տարրերի ավելի բարձր ապահովվածություն և գյուղական բնակավայրերի համեմատաբար մեծ մարդաշտություն ունեցող մարզերում և տարածաշրջաններում 2005-2013 թթ. ընթացքում գյուղական բնակչության ծնելիության և բնական հավելածի ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրվել, քան ծայրամասային և սահմանամերձ դիրք ունեցող մարզերում և տարածաշրջաններում,

5. ՀՀ մարզերի և տարածաշրջանների միջև ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների զգալիորեն մեծ տարբերություններ կան, որը պայմանավորված է դրանց աշխարհագրական դիրքով, բնատնտեսական առանձնահատառություններով և սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից իրավիճակով: Գյուղական բնակչության մահացության գործակիցն առավել բարձր է ՀՀ այն տարածաշրջաններում և գյուղական համայնքներում, որտեղ հանրապետության մասշտաբով ցածր է ծնելիության գործակիցը, որը վկայում է այդ տարածաշրջանների գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների մասնաբաժնի աճի և երիտասարդ տարիքի բնակչության մասնաբաժնի նվազման մասին:

3.8 ՀՀ գյուղական բնակատեղերի ու բնակավայրերի համալիրային տիպայնացումը որպես որանց հեռանկարային զարգացման հիմք: ՀՀ գյուղական բնակավայրերի համալիրային տիպերի առանձնացման համար առավել նպատակահարմար է հաշվի առնել հետևյալ հիմնական ցուցանիշները. 1/ գյուղերի մարդաշտությունը, 2/ ապահովվածությունը հողային ռեսուրսներով, 3/ աշխարհագրական դիրքը և տեղադիրքը, 4/ հեռավորությունը քաղաքային բնակավայրերից, մարզկենտրոններից և տարածաշրջանային կենտրոններից, 5/ գյուղական համայնքներում, բնակչության տարիքային կառուցվածքի ցուցանիշները 6/ գյուղական համայնքների ապահովվածությունը տրամադրութային ուղիներով և 7/ գյուղական բնակավայրերի տարածաշրջանային բնութագրի դիրքն ըստ սահմանային գտնիների:

Կատարված վերլուծության արդյունքների հիման վրա առանձնացրել ենք ՀՀ գյուղական բնակավայրերի (համայնքների) համալիրային 7 տիպ: Դրանցից յուրաքանչյուրն առանձնանում են վարչական ու տնտեսական գործառույթներով և նշանակությամբ, բարեկարգվածության մակարդակով, տրամադրութային և հողային ռեսուրսների ապահովվածությամբ, տարաբնույթ ծառայությունների և կենցաղսպասարկման կազմակերպման բնույթով, աշխարհագրական դիրքի ու տեղադիրքի առանձնահատկություններով, տարածաշրջանային բնութագրով և այլ հատկանիշներով:

ՀՀ գյուղական բնակավայրերի տիպայնացման արդյունքները թույլ են տալիս եզ-

րակացնել, որ.

1. ՀՅ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական համալիրային տիպերի առանձնացումը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել գյուղական բնակավայրերի առանձին խնբերին բնորոշ սոցիալ-տնտեսական բնութագրիչների և առկա խնդիրների մասին,

2. առաջիկա տարիների ընթացքում գյուղական բնակավայրերում տեղի ունեցող բազմաբնույթ տեղաշարժերը կարող են փոփոխություններ նշցնել տիպերի բնութագրական առանձնահատուկ կողմերի մեջ, որոնց ուսումնասիրումը թույլ կտա բացահայտել գյուղական բնակավայրերի առանձին տիպերի և ողջ գյուղական տարաբնակեցման համակարգում տեղի ունեցող գործընթացների էռթյունը և զարգացման միտումները,

3. շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորումը զգալի չափով փոխել է ՀՅ գյուղական բնակավայրերի տարբեր խնբերին բնորոշ սոցիալ-տնտեսական պատկերը և ծնել հիմնախնդիրներ, որոնց լուծումից է կախված գյուղական բնակավայրերի զարգացման հեռանկարը,

4. ՀՅ գյուղական բնակավայրերի համալիրային սոցիալ-տնտեսական տիպերի առանձնացումը հանդիսանում է հիմք, որի վրա հենվելով կարելի է մշակել և իրականացնել գյուղական բնակավայրերի զարգացման գործընթացների կազմակերպման և կառավարման գիտականորեն հիմնավորված ծրագիր:


3.9 Տարածքի բնակեցման տիպերը և գյուղական տարաբնակեցման շրջանացումը:
ՀՅ-ն աչքի է ընկնում տարածքի բնակեցման բազմաթիվ տիպերով, որոնք ընդհանուցնելով կարելի է առանձնացնել հետևյալ հինգ տիպերը.

1/Համատարած խիտ բնակեցված շրջաններ, առավելապես մեծ և խոշոր գյուղերով, քաղաքային բնակավայրերի զարգացած ցանցով, 2/համատարած խիտ բնակեցված շրջաններ, տարածքի անհավասարաչափ բնակեցումով, խոշոր և մեծ գյուղերով, քաղաքային բնակավայրերի համեմատաբար թույլ զարգացած ցանցով, 3/ լեռնային օջախներով բնակեցման շրջաններ, փոքր, միջին և մեծ գյուղերով, քաղաքային բնակավայրերի թույլ զարգացած ցանցով, 4/նոսր բնակեցված շրջաններ, հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերով, առանձին շրջաններում քաղաքային բնակավայրերի բացակայությամբ, 5/կոմպակտ բնակեցված շրջաններ՝ բնակչության և բնակավայրերի միջին խտությամբ, տարբեր մեծության գյուղական բնակավայրերով:

ՀՅ տարածքն առանձնանում է ոչ միայն բնակեցման, այլ նաև գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման տիպերի բազմազանությամբ, որը ձևավորվել է պատմական երկարատև զարգացման ընթացքում՝ բնաշխարհագրական և սոցիալ-տնտեսական գործնների ազդեցության տակ:

Լեռնային երկրներում բնատնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և պատմա-ազգագրական գործնների ներգործությամբ առաջանում են գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման բազմազան ձևեր: Տարաբնակեցման բնաշխարհագրական և սոցիալ-տնտեսական պայմանները ՀՅ տարածքում փոփոխվում են ոչ միայն մեկ բնալանդշաֆտային գոտուց մյուսին անցնելիս, այլ նաև դրանցից յուրաքանչյուրի ներսում: Բնալանդշաֆտային միևնույն գոտու սահմաններում կարող են լինել գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման համալիրային (տեղական) մի քանի տիպեր, որոնք առանձնացվում են մի քանի հատկանիշների հիման վրա և տալիս են ամբողջական պատկերացում տարաբնակեցման բնույթի մասին:

Տարաբնակեցման տեղական տիպերի միանման հատկանիշների համադրման և



Նկ. 3 ՀՀ Գյուղական տարաբնակեցման շրջանացումը, 2012 թ.

ընդհանրացման հիման վրա կատարել ենք ՀՀ գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման շրջանացում: Առանձնացվել են տարաբնակեցման 7 շրջան, 37 համալիրային (տեղական) տիպ և 21 ենթատիպ: Տարաբնակեցման տեղական (համալիրային) տիպերն առանձնացվել են հետևյալ հատկանիշների հիման վրա: 1/ աշխարհագրական դիրքը և տարաբնակեցման արտաքին պատկերը, 2/ բնակավայրերի մարդաշատությունը, 3/ բնակավայրերի արտադրական մասնագիտացման ուղղությունը, 4/ միջբնակավայրային տրանսպորտային ապահովածությունը և 5/ բնակեցվածության տիպը:

ԳԼՈՒԽ 4 ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ

ԴԻՄՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1831-2013 թթ.)

ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի վերլուծությունը տրվել է 1831-2013 թթ. ժամանակահատվածի համար և առանձնացվել է երեք փուլ. 1) 1831-1926 թթ., 2) 1926-1988 և 3) 1988-2013 թթ.: Դրանք մինյանցից տարրերվում են ՀՀ քաղաքական իրավիճակի, սոցիալ-տնտեսական պայմանների, վարչատարածքային և սահմանային որոշակի փոփոխություններով: Բացահայտվել և բնութագրվել են գյուղական տարաբնակեցման կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները, բնակավայրերի և բնակչության թվի փոփոխություններն ըստ տարածաշրջանների և բարձրության գոտիների: ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցն առավել էական փոփոխություններ է կրել հատկապես խորհրդային ժամանակաշրջանում:

Այլուսակ 6

ՀՀ գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխությունները 1926-2013 թթ.¹

Գյուղական տարաբնակեցումը բնութագրող ցուցանիշներ	Բնակավայրերի թիվը ժամանակահատվածի ընթացքում					
	1926- 1959	1959- 1970	1970- 1988	1988- 1995	1995- 2013	1926- 2013
Ընդամենը հանրապետությունում						
ա/ Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	1286 1117	1117 931	931 909	909 925	925 942	1286 942
բ/ Վերացված գյուղական բնակավայրերի թիվը	202	184	26	5	-	417
այդ թվում՝ գյուղերի թիվը	169	79	26	5	-	279
զ/ քաղաքներ դարձած գյուղերի թիվը	27	10	4	-	2	43
դ/ այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	66	19	12	2	-	99
ե/ Նոր ստեղծված գյուղական բնակավայրերի թիվը	126	27	18	7	-	178
զ/ այդ թվում գյուղեր	62	27	18	7		114 ²
է/ վերականգնված գյուղերի թիվը	-	-	2	16	-	18
ը/ Նախկին քաղաքային բնակավայրերից առաջացած գյուղերի թիվը	-	-	-	-	7	7

¹ Այլուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.» Е. 1962, վիճակագրական ժողովածուի, 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում Ե., 1991 և ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2013 թ. վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

2. 1926-2013 թթ. հանրապետությունում ստեղծվել է 104 գյուղ, մնացած 10-ի վերաբերյալ տես 4-րդ գլխում տրված բացատրությունները: Համարիչում՝ բնակավայրերի թիվը ժամանակահատվածի սկզբում, հայտարարում՝ բնակավայրերի թիվը ժամանակահատվածի վերջում:

Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի բազմազանությունը, քաղաքայնացման գործնթացները, բնակչության բարձր բնական աճը և միգրացիոն բարձր ակտիվությունը, գյուղատնտեսության զարգացման բնական սահմանափակ հնարավորությունները, երկրում տարվող ագրարյային և տարածաշրջանային զարգացման քաղաքականությունը եղել են այն հիմնական գործոնները, որոնք իրենց ազդեցությունն են թողել ՀՀ գյուղական բնակավայրի և տարաբնակեցման զարգացման վրա՝ առաջարել քանակական, որակական և տարածքային փոփոխություններ ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի կառուցվածքում:

Եթե 1926-1970 թթ-ին ՀՀ-ում տիրապետող է եղել գյուղական բնակավայրերի նվազման միտումը, ապա 1970-1988 թթ. եղել է կայունացման ժամանակաշրջան: Խորհրդային տարիներին տեղի է ունեցել ՀՀ տարբեր տարածաշրջանների և մարզերի միջև գոյություն ունեցող գյուղական բնակչության տեղաբաշխման տարբերությունների մեծացում՝ զգալիորեն բարձրացել է Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի (22-ից 39 %) և նվազել է Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերի բաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ (39 %-ից 25.3 %): Այդ ընթացքում տեղի է ունեցել գյուղերի խոշորացում՝ ինչպես մասր և փոքր գյուղերի վերացման, այնպես էլ գյուղական բնակչության բացարձակ թվաքանակի ավելացման շնորհիվ: Եթե 1926 թ. հանրապետության համար բնորոշ էր մեծ, միջին և փոքր գյուղային տարաբնակեցումն, ապա 1988թ-ին՝ մեծ, խոշոր և միջին գյուղային տարաբնակեցումը:

Գյուղական բնակավայրերի թիվը 1926-1988 թթ. նվազել է բարձրության բոլոր գոտիներում: Յարաբերականորեն ավելացել է մինչև 1000 և 1400-1600 մ բարձրության գոտիների գյուղերի թիվը: Բարձրության բոլոր գոտիներում, բացառությամբ 2200 մ-ից բարձր գոտու, 1926-1988 թթ. ընթացքում գյուղական բնակչության թիվն ավելացել է: Գյուղական բնակչության թվի ավելացման մեջ նաև բաժին է ընկնում 800-1000 մ գոտուն:

Սկսած 1980-ական թվականների վերջերից ՀՀ գյուղական տարաբնակեցման մեջ տեղի են ունենում փոփոխություններ, որոնք եականորեն տարբերվում են մինչ այդ տեղի ունեցած գործնթացներից: Քաղաքական, տնտեսական և ժողովրդագրական առումով լինելով խիստ փոփոխական և անկայուն ժամանակաշրջան, այդ ընթացքում գյուղական բնակավայրերում տեղի ունեցած գործնթացներն եղել են ինտենսիվ:

ԳԼՈՒԽ 5. ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՏԱՐԱԾՈՂՁԱ- ՆԱՅԻՆ ԱՊԱՍՉԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ-ում հստակորեն առանձնացվող բնատնտեսական միավորների միջև գոյություն ունի գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման նկատելի տարբերություններ, քանի որ գյուղական բնակավայրերն առավել մեծ չափով են իրենց վրա կրում բնական համալիրի տարրերի անմիջական և միջնորդավորված ազդեցությունը: Այդ միավորներն իրենց տարածքի սահմաններում ունենալով տարաբնակեցման լավ արտահայտված գծեր, առաջին հերթին միմյանցից տարբերվում են իրենց բնակչության տարածքային կազմակերպման առանձնահատկություններով: ՀՀ մարզերից Շիրակը, Լոռին, Տավուշը, Գեղարքունիքը, Վայոց ձորը և Սյունիքն իրենց տարածքով հիմնականում համապատասխանում են Շիրակ, Գուգարք, Ուտիք, Սևան, Վայք և Զանգեզուր բնատնտեսական շրջաններին, իսկ մնացած մարզերի տարածքները միասին վերցրած մասնակի շեղումներով համապատասխանում է Արարատ բնատնտեսական շրջանին: Վերջիններու առանձնանում են գյուղական տարաբնակեցման իրենց բնորոշ գծերով և զարգացման հիմնախնդիրներով:

Արարատյան բնատնտեսական շրջանն առանձնանում է գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ձևավորման և զարգացման համար առավել նպաստավոր և նպաստավոր բնատնտեսական, աշխարհաքաղաքական, պատմաշխարհագրա-

կան և ենթակառուցվածքային պայմաններով, բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման յուրահատուկ գծերով, բնակավայրերի մարդաբանակի մեջ տարրերություններով և անցած տասնամյակների ընթացքում գյուղական բնակչության տեղաբաշխման և մարդաբանակի մեջ տեղի ունեցած փոփոխություններով: Առավել էական է գյուղական բնակչության բացարձակ թվի և մասնաբաժնի ավելացումը՝ 33-ում: Վերջինս 1926 թ. հետո բարձրացել է 20 կետով:

Ծիրակի մարզի բնական պայմանների համալիրում տարաբնակեցման համար առաջնային նշանակություն ունի տարածքի ընդհանուր բարձրադիր դիրքը: Մարզն առանձնանում է գյուղական բնակչության համեմատաբար բարձր խտությամբ և տարածաշրջանային մեջ տարրերություններով, որի պատճառով արդյունավետ չեն օգտագործվում մարզի տարածքային և գյուղատնտեսական հողատարածքները, բարձրադիր և սահմանամերձ գյուղական բնակավայրերից շարունակվում է բնակչության միգրացիան և վերջիններս կարող են հայտնվել բնագրկման վտանգի առաջ:

Լոռու մարզի մակերևույթի բազմազանությունը, տարածքի տնտեսական յուրացվածության և տնտեսության տարածքային կառուցվաքի տարրերությունները պայմանավորել են գյուղական բնակչության և բնակավայրերի խիստ անհավասարաչափ տեղաբաշխումը: Դրանք հիմնականում գտնվում են 1200-1800 մ բարձրություններում՝ տրանսպորտային ուղիների մերձակա տարածքներում, Լոռվա սարահարթում և գետահովտային ու լեռնահովտային հարմար տարածքներում՝ առաջացնելով տարաբնակեցման միանգամայն տարբեր ձևեր և համալիրային տիպեր: Սպիտակի երկրաշրջը, մեր տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները և գյուղական բնակչության միգրացիան վերջին երկու տասնամյակում էական ազդեցություն են թողել մարզի գյուղերի մարդաշատության վրա: Տասնյակ գյուղերում առաջացել է ժողովրդագրական աննպաստ իրավիճակ և սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրներ:

Գեղարքունիքի մարզում մշակելի հողատարածքների համեմատաբար մեջ չափերը և իյութալի ու ընդարձակ արոտավայրերի առկայությունը պայմանավորում են մարզի գյուղերում բուսաբուծության և անասնապահության գուգակցված զարգացումը և գյուղերի բարձր մարդաշատությունը: Վերջինս՝ 33 միջինից բարձր է 1,4 անգամ, իսկ գավառի և Մարտունու տարածաշրջաններում՝ 2,4-ից 3,3 անգամ: Գեղարքունիքն առանձնանում է տարաբնակեցման հստակորեն առանձնացվող արեալներով, որոնք համընկնում են լեռնային գոգահովվիտների հետ և տարածված են գոգավորության առավել հարթ շրջաններում՝ մշակելի հողատարածքների հատվածներում: Առավել տարածված են տարաբանեցման խմբային, շղթայաձև և գծային ձևերը: Ըստ գերակշռող մարդաբանակի մարզն ունի գերխոշոր, մեծ և խոշոր գյուղային տարաբնակեցում:

Սյունիքի մարզը ոչ միայն բնության սուր հակադրությունների երկիր է, այլ նաև տարաբնակեցման: Մարզի գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման յուրօրինակ առանձնահատկությունները պայմանավորված են նաև պատճառաշխարհագրական գործուներով և տնտեսական գործունեության խիստ բազմազանությամբ: Սյունիքի տարածքի բարձրության յուրաքանչյուր գոտի լինելով ինքնուրույն բնատնտեսական միավոր, առանձնանում է գյուղատնտեսական մասնագիտացման, բնակչության զբաղմունքի և գյուղական տարաբնակեցման ձևերով և տիպերով: Օգտագործվող հողատարածությունների փոքր չափերը և գյուղատնտեսության զարգացման համեմատաբար ոչ բարձր մակարդակը պայմանավորել են Սյունիքի տարաբնակեցման համակարգում փոքր գյուղերի գերակշռությունը:

Վայոց ծորի մարզի տարածքը՝ շրջապատված բնական պատճեշմերով, տիպիկ լեռնային, խիստ կտրատված մակերևույթով, չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով և սահմանափակ հողային ռեսուրսներով, կախված տնտեսության զարգացման մակարդակից և ներքին ու արտաքին այլ գործուներից, յուրահատուկ

պայմաններ են ստեղծել տարածքի բնակեցման և բնակավայրերի զարգացման համար: Մարզն առանձնանում է գյուղերի ամենափոքր թվաքանակով, նոսր բնակեցվածությամբ և ոչ մեծ մարդաշտությամբ:

Տավուշի մարզին բնորոշ գառիվեր լանջերով խորը ձորերն ու կիրճերը, մակերևույթում տիրապետող համարվող 12⁰-ից բարձր թեքությունները զգալիորեն կրծատում են տարաբնակեցման համար պիտանի տարածքների նակերեսը: Մշակովի հողատարածքները և գրեթե ամբողջ բնակչությունը կենտրոնացված են գետահովիտներում: Մարզին առավել բնորոշ են ավազանային և գետահովտային տիպի տարաբնակեցումը, երբ գետերի ջրահավաք ավազաններում ստեղծվում է բնակավայրերի որոշակի ամբողջություն, սպասարկման միասնական համակարգ՝ տրանսպորտային և այլ ենթակառուցվածքների ընդհանրությամբ և միջբնակավայրային սոցիալ-տնտեսական կապերով:

ԳԼՈՒԽ 6. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

6.1 Գյուղական բնակչության շարժնթացի ժամանակակից միտումները և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:

Վերջին ավելի քան մեկուկես տասնամյակի ՀՀ գյուղական բնակչության շարժնթացի արդյունքները ցույց են տալիս, որ

1/ Եթե մինչև 1990-ական թվականների կեսերը ՀՀ-ում գյուղական բնակչության շարժնթացի բնակչության թվի նվազումը բնորոշ էր հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերին (առավելագույնը մինչև 500 մարդ ունեցող գյուղերին), ապա վերջին ավելի քան մեկուկես տասնամյակի ընթացքում այդ երկույթը դիտվում է նաև բազմաթիվ մեծ, խոշոր և խոշորագույն գյուղերում,

2/ գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազում տեղի է ունեցել բոլոր մարզերում և տարածաշրջաններում, ընդգրկելով նաև առավել նպաստավոր բնաշխարհագորական և սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ ունեցող մարզերի ու տարածաշրջանների մեծ, խոշոր և խոշորագույն գյուղական բնակավայրերը,

3/ ՀՀ հարյուրավոր գյուղական բնակչության բնակչության թվի նվազման պատճառով ստեղծվել է անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակ, որի հետևանքով առաջանում են գյուղական բնակավայրերի տնտեսական, սոցիալական ու կենցաղային կյանքի կազմակերպման բազմաթիվ հիմնախնդիրներ,

4/ Ըստ մարդաշտության հանրապետության գյուղական բնակավայրերի տարրեր խմբերում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով նկատելիորեն ավելացել է մանր և փոքր գյուղերի (մինչև 200 բնակիչ) բաժինը, կազմելով 15.6 %: Չնայած որ 1970-2012 թթ. ընթացքում համեմատաբար կայուն է մնացել 1001-3000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը, սակայն 7,6 տոկոսային կետով նվազել է այդպիսի գյուղերի բնակչության բաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ,

5/ Ըստ գերակշռող մարդաքանակի հանրապետության գյուղական բնակավայրերի տարրեր խմբերի միջև բնակչության բաշխման տարրերություններն ավելի են մեծացել: Մինչև 1000 բնակիչ ունեցող 483 գյուղական բնակավայրերում (ՀՀ բնակեցված գյուղերի 53, 4 %-ը) ապրում է երկրի գյուղական բնակչության ընդամենը 15.5 %-ը, որի հետևանքով նվազում է այդ բնակավայրերի տարածքային և գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը,

6. ՀՀ գյուղական բնակչության շարժնթացի և դրանով պայմանավորված տարաբնակեցման համակարգում առաջացած հիմնախնդիրներն առավել սուր և տագնապալի բնույթ ունեն հանրապետության բարձրլեռնային և սահմանամերձ շրջաննե-

րում, որտեղ գյուղերի միջին մարդաշատությունը փոքր է և շարժընթացի նման մի-
տումների պահպաննան դեպքում մոտ ապագայում դրանք կկանգնեն բնագրկման
վտանգի առաջ:

ՀՀ գյուղական տարաբնակեցման մեջ ներկայումս տեղի ունեցող փոփոխութ-
յունները և վերը նշված միտումների պահպանումն ու խորացումը չեն նպաստում
գյուղերի սոցիալ-տնտեսական առաջընթացին, տարաբնակեցման կատարելագործ-
մանը, տարածաշրջանների և ՀՀ համալիրային ու կայուն զարգացմանը:

6.2 Գյուղական բնակավայրերի զարգացման և կատարելագործման վրա ազդող հիմնական գործոնները և դրանց տարածաշրջանային տարրերությունները:

Ժամանակակից պայմաններում ՀՀ գյուղական բնակատեղերի ու տարաբնա-
կեցման զարգացումը, վերափոխումն ու կատարելագործումը տեղի է ունենում բնա-
կան, արտադրատնտեսական, ֆինանսական, սոցիալ-ժողովրդագրական, վարչա-
տարածքային ու ուրբանիզացիոն և այլ գործոնների ազդեցության տակ: Այդպիսիք
են գյուղական համայնքի (բնակավայրի) ծովի մակարդակից ունեցած
բարձրությունը, վարչական բյուջեի փաստացի եկամուտները, մշակելի և գյուղա-
տնտեսական ընդհանուր հողատարածքների մեծությունը, նախկին շրջկենտ-
րուններից և մարզկենտրոններից ունեցած հեռավորությունն ու ուրբանիզացիայի
մակարդակը, ինչպես նաև գյուղերի հեռավորությունը գյուղատնտեսական և
առևտրային մեջ շուկաներից, մայրաքաղաք Երևանից:

Գյուղական տարաբնակեցման հիմնական բնութագրերի վրա նշված գործոննե-
րի ազդեցությունը պարզելու համար կորելյացիոն վերլուծության մեթոդով կատա-
րել ենք հետազոտություն և բացահայտել յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը
տարաբնակեցումը բնութագրող ցուցանիշների՝ մասնավորապես գյուղական բնա-
կավայրերի մարդաքանակի վրա: Վերջինս, ըստ էության, ինտեգրալ այն ցուցանիշն
է, որն ընդհանրական ձևով արտահայտում է գյուղական տարաբնակեցման ընդհանուր
պատկերը և գյուղական բնակավայրի զարգացման ու վերափոխման արդյունքը:

Կատարված հետազոտությունը և վերլուծության շնորհիվ ստացված արդ-
յունքները հնարավորություն են տալիս կատարել որոշակի եզրահանգումներ.

ՀՀ տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցա-
նիշներից բնակչության խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորութ-
յունը սերտ կապ ունեն տվյալ տարածաշրջանի գյուղատնտեսական հողատարածք-
ների բացարձակ և հարաբերական մեծությունների հետ: **Դետալաբար՝**

**1. ինչպես առանձին գյուղերի, այնպես էլ տարածաշրջանների ու ողջ գյուղական
բնակատեղերի ու տարաբնակեցման համակարգի հետագա զարգացումը, վե-
րափոխումն ու կատարելագործումը նախ և առաջ պայմանավորված է վերջինիս
հիմնական արտադրատնտեսական բազայի՝ գյուղատնտեսական հողատարածք-
ների արդյունավետ օգտագործումից՝ գյուղատնտեսական արտադրության
ինտենսիվացումից:**

Աղյուսակ 7

77 գյուղական համայնքների (բնակավայրերի) մարդաքանակի և բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործոնների միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցներն ըստ տարածաշրջանների¹

Տարածաշրջանները	Գոճական -տպագիրսորդ Վազնայիշ	Դռնացան Կապուղոց Վազնայիշ	Դռնացան Կապուղոց Վազնայիշ	Դռնացան Կապուղոց Վազնայիշ	Դռնացան Կապուղոց Վազնայիշ	Դռնացան Կապուղոց Վազնայիշ
Ախուրյանի	0,75	0,34	0,97	0,51	0,41	0,59
Ամասիայի	0,09	-0,42	0,11	0,80	0,28	0,70
Աշոցքի	0,78	0,30	0,77	0,06	0,45	-0,03
Առթիկի	0,45	0,65	0,97	-0,38	0,20	-0,10
Աճի	0,09	0,66	0,88	-0,78	0,76	0,32
Աշտարակի	0,61	0,28	0,97	0,42	0,44	0,44
Ապարանի	0,54	0,45	0,95	0,16	-0,05	0,46
Արագածի	0,77	0,53	0,97	-0,28	0,04	-0,17
Թալինի	0,43	0,50	0,96	0,05	0,26	0,34
Գորիսի	0,61	0,68	0,98	0,19	0,52	-0,40
Կապանի	0,38	0,49	0,85	0,10	0,29	0,29
Մեղրու	-0,03	0,22	0,70	0,57	0,19	-0,32
Սիսիանի	0,79	0,48	0,89	0,34	0,32	0,35
Իջևանի	0,54	0,46	0,99	0,26	0,43	0,43
Նոյեմբերյանի	0,92	0,77	0,97	-0,12	0,34	0,07
Տավուշի	0,57	0,57	0,98	0,02	-0,20	-0,45
Գուգարքի	0,72	0,56	0,92	-0,08	0,32	0,26
Թումանյանի	0,59	0,41	0,75	0,40	0,19	0,07
Սպիտակի	0,41	0,68	0,99	-0,11	0,16	0,05
Ստեփանավանի	0,76	0,19	0,93	0,15	0,06	0,35
Տաշիրի	0,80	0,25	0,92	-0,10	0,00	0,04
Կոտայքի	0,21	-0,06	0,83	0,59	0,41	0,31
Նահինիի	0,43	-0,06	0,96	0,63	0,63	-0,36
Ճրագդանի	0,75	0,05	0,89	0,32	0,39	0,39
Գավառի	0,90	0,94	0,95	0,02	0,51	0,51
Կրասնուելսկի	0,69	0,69	0,91	-0,28	0,42	0,35
Մարտունու	0,35	0,08	0,84	0,23	0,55	-0,10
Սևանի	0,87	0,67	0,82	0,21	0,37	0,02
Վարդենիսի	0,49	0,24	0,90	0,70	0,43	0,56

¹ Այսուսակը կազմած է ՀՀ գյուղական համայնքների 2012 թ. բնակչության թվաքանակի, գյուղատնտեսական և մշակելի հողտարածքների, վարչական բյուջեի եկամուտների, նախկին շրջկենտրոններից և մարզկենտրոններից ունեցած հեռավորության տվյալների հիման վրա:

Արտաշատի	0,72	0,68	0,95	0,25	0,43	0,43
Արարատի	0,59	-0,22	0,96	0,54	0,56	0,68
Մասիսի	0,44	0,40	0,80	-0,30	0,22	0,00
Եջմիածնի	0,81	0,72	0,98	-0,28	-0,28	0,19
Արմավիրի	0,49	0,60	0,97	0,21	0,30	0,30
Բաղրամյանի	0,02	-0,72	0,89	0,69	0,28	0,34
Եղեգնաձորի	0,49	-0,29	0,96	0,75	0,61	0,61
Վայքի	0,78	0,41	0,80	0,03	0,25	0,02

2. ՀՀ տարածաշրջանների մեջ մասում գյուղական համայնքների ու բնակավայրերի մարդաքանակի և դրանց ծովի մակարդակից ունեցած բարձրության միջև կոռելյացիոն թույլ կապը վկայում է գյուղական տարաբնակեցման զարգացման, վերափոխման և կատարելագործման գործում բնական գործոնների դերի աստիճանական նվազման և այլ գործոնների դերի մեծացման մասին,

3.ՀՀ գյուղական համայնքների բնակչության թվաքանակի ավելացումը, սոցիալական ու տնտեսական շատ խնդիրների լուծումը մեծապես կախված է գյուղական համայնքների վարչական բյուջեի փաստացի եկամուտներից և դրանց նպատակային օգտագործումից:

4.Հանրապետության գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական համայնքների (բնակավայրերի) մարդաքանակը մեծապես կախված է գյուղական համայնքների մշակելի հողատարածքների մեծությունից: Մշակելի հողատարածքների նպատակային օգտագործումն ու դրանց արդյունավետության բարձրացումն էական դեր կունենա գյուղական բնակավայրերի կայունացման ու ամրապնդման և սոցիալ-տնտեսական առաջընթացի համար,

5. ՀՀ բոլոր մարզերում և տարածաշրջաններում գյուղական տարաբնակեցման վերափոխումը և կատարելագործումը էականորեն կախված է նաև մարզային և տարածաշրջանային կենտրոնների դերի բարձրացումից և համապատասխան տարաբնակեցման համակարգերում դրանց գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրականացումից: Դա կիհանգեցնի մարզկենտրոն-գյուղական բնակավայր, տարածաշրջանային կենտրոն - գյուղական բնակավայր կապերի ամրապնդման ու կայունացմանը և տարաբնակեցման տեղական համակարգի կատարելագործմանը,

6.Ժամանակակից շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում մարզկենտրոնները, տարածաշրջանային կենտրոնները, առանձին քաղաքային բնակավայրեր և տեղական նշանակության կենտրոններ ՀՀ գյուղական բնակավայրերի համար հանդիսանում են նաև մոտակա մեջ առևտրային և գյուղատնտեսական շուկաներ: Դրանց և գյուղերի միջև կայուն տրանսպորտային հաղորդակցության ապահովումն ու զարգացումը կնպաստի գյուղերի տնտեսական բազայի ամրապնդմանը և ի վերջո բոլոր գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

6.3 ՀՀ գյուղական բնակչության ժղովրդագրական իրավիճակի բարելավումը որպես գյուղական բնակավայրերի զարգացման նախադրյալ

Գիտագործնական առունելի մեջ կարևորություն է ներկայացնում ՀՀ գյուղական առկա բնակչության հիմնական տարիքային խմբերի բաշխման վերլուծությունն ըստ գյուղական համայնքների, որը հնարավորություն է տալիս բացահայտել և առանձնացնել գյուղական համայնքների ու գյուղերի այնպիսի խմբեր, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության հիմնական տարիքային խմբերին բնորոշ առանձնահատկություններով և դրանց հիմնա վրա նաև զարգացման միտումներով և հեռանկարով: Կերպություններն ավելի ամբողջական կլինեն եթե կատարենք գյուղական համայնքների բնակչության հիմնական տարիքային խմբերի ցուցա-

նիշների համադրում և առանձին խմբերի առանձնացում, որոնք միմյանցից տարբեր վում են բնակչության տարիքային կառուցվածքի ու ժողովրդագրական իրավիճակի պատկերով և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով: Այդպիսի խմբերի առանձնացման համար որպես չափանիշ մեր կողմից ընտրվել է գյուղական համայնքների բնակչության տարիքային հիմնական խմբերի տարբեր գուգակցումները: Դրանց հիմնան վրա, համակարգչային ծրագրի օգնությամբ առանձնացվել են ՀՀ գյուղական համայնքների 5 խումբ և մեկ ենթախումբ, որոնք առանձնանալուն են բնակչության տարիքային հիմնական խմբերի ու ժողովրդագրական իրավիճակի նշանակալից տարբերություններով և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով:

Առաջին խմբի մեջ մտնում են գյուղական այն համայնքները, որոնք ունեն **առավել բարենպաստ** ժողովրդագրական իրավիճակ և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններ: Սրանք ունեն աշխատունակ և մինչաշխատունակ տարիքի բնակչության համրապետության միջինից բարձր ցուցանիշներ: ՀՀ-ում այդպիսի գյուղական համայնքները 107 են: Դրանք առավել շատ են Արագածոտնի (15), Արարատի (18), Արմավիրի (17), Գեղարքունիքի (14) և Շիրակի (20) մարզերում, իսկ թիվ՝ Լոռու (9), Սյունիքի (2), Տավուշի (3) և Վայոց ձորի (1) մարզերում:

Երկրորդ խմբի մեջ մտնում են 62 գյուղական համայնք: Սրանք ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զարգացման առումով ունեն **բարենպաստ** իրավիճակ և հնարավորություններ: Սրանցում աշխատունակ տարիքի բնակչության բաժինը բարձր է միջին համրապետականից (67,3 %), իսկ մինչաշխատունակ տարիքի բնակչության բաժինը չի գերազանցում ՀՀ միջին (20,5 %) ցուցանիշը, բայց ոչ պակաս դրանից մինչև 1 %: Այս խմբի բնակավայրն ավելի շատ են Արմավիրի (13), Կոտայքի (11), Շիրակի (10), Արագածոտնի (13) և Արարատի (8) մարզերում, թիվ՝ Լոռու (3), Սյունիքի (3) և Վայոց ձորի (1) մարզերում:

Երրորդ խմբի մեջ մտնող գյուղական համայնքների ժողովրդագրական իրավիճակը և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները կարելի է գնահատել **լավ**: Սրանք 29 գյուղական համայնք են: Այս գյուղական համայնքների աշխատունակ տարիքի բնակչության բաժինը չի գերազանցում ՀՀ միջին ցուցանիշը (67,3 %), բայց ոչ պակաս է 66,3 %-ից, իսկ մինչաշխատունակ բնակչության բաժինը մեծ է 19,5 %-ից: Սրանք թվաքանակով (8) ավելի շատ են Արմավիրի մարզում, իսկ մնացած մարզերում դրանց թիվը տատանվում է մեկից չորսի սահմաններում:

Չորրորդ խմբի մեջ մտնող գյուղական համայնքները ժողովրդագրական իրավիճակի և սոցիալ-տնտեսական զարգացման առումով ունեն **բավարար** պայմաններ: Դրանցում աշխատունակ բնակչության բաժինը գերազանցում է 66,3 %-ը, իսկ մինչաշխատունակ բնակչության բաժինը փոքր կամ հավասար է ՀՀ միջինից (20,5 %), բայց վերջինից 1,5 անգամից ոչ պակաս: Այս խումբն ամենախոշորն է: Ընդգրկում է 300-ից ավելի գյուղական համայնք: Այդպիսիք ավելի թիվ են Տավուշի (5) և Սյունիքի (17), շատ՝ Արագածոտնի (39), Արարատի (44), Արմավիրի (48), Լոռու (42) և Շիրակի (45) մարզերում:

Յինգերորդ խմբի մեջ մտնող գյուղական համայնքները ժողովրդագրական իրավիճակի և սոցիալ-տնտեսական զարգացման առումով ունեն **վաստ** պայմաններ: Դրանցում մինչաշխատունակ բնակչության բաժինը փոքր է ՀՀ միջին ցուցանիշից (20,5 %), իսկ մեծահասակ բնակչության բաժինը մեծ է ՀՀ միջին (12,2 %) ցուցանիշից: Այս խմբի մեջ մտնում են շուրջ 244 գյուղական համայնք բոլոր մարզերից: Այդպիսիք են Սյունիքի գյուղական համայնքների գրեթե կեսը (51 համայնք), 46-ը Լոռու մարզից, 26-ական Շիրակի և Տավուշի մարզերից, 17-ը Վայոց ձորից, 23 համայնք Արագածոտնից: Թվաքանակով և տոկոսային մեծությամբ դրանք առավել թիվ

Են Արարատի (17), Արմավիրի (11), Կոտայքի (11) և Գեղարքունիքի մարզերում: Այս խմբից կարելի է առանձնացնել Ենթախումբ կամ պայմանականորեն 6-րդ խումբ: Դրանք այն գյուղական համայնքներն են, որոնք ժողովրդագրական առումով գտնվում են շատ վատ կամ **ծայրահեղ վատ** իրավիճակում: Այդպիսի գյուղական համայնքներում մինչաշխատումակ բնակչության բաժինն ավելի քան 1,5 անգամ պակաս է ՀՀ միջինից, իսկ մեծահասակ բնակչության բաժինն ավելի քան 1,5 անգամ գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը: Այս կարգավիճակում են ՀՀ 30 գյուղական համայնք, որի կեսից ավելին (17) գտնվում են Սյունիքում, չորսը՝ Լոռում, երեքը՝ Արագածոտնում, երկուական Գեղարքունիքում և Շիրակում, մեկական՝ Տավուշի և Վայոց ձորի մարզերում, իսկ Արարատի և Արմավիրի մարզերում այդպիսիք բացակայում են:

Վերը բերված խմբերը միասին ընդգրկում են 759 գյուղական համայնք, մնացած 107-ը չեն մտնում նշված խմբերից որևէ մեկի մեջ և զբաղեցնում են միջանկյալ դիրք նշված խմբերի միջև:

Այսպիսով, ՀՀ գյուղական առկա բնակչության սեռատարիքային կառուցվածքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

- 1) Հանրապետության մարզերի և տարածաշրջանների գյուղական բնակչության բաշխումն ըստ հիմնական տարիքային խմբերի և սեռի ունի նկատելի տարբերություններ, որն առավել ցայտուն է դրսնորվում գյուղական համայնքների մակարդակով,
- 2) ՀՀ հարյուրավոր գյուղական համայնքներում և բնակավայրերում առաջացել է առկա բնակչության տարիքային հիմնական խմբերի ոչ նպաստավոր իրավիճակ, մասնավորապես՝ տարիքային հիմնական խմբերի տոկոսային մեծությունների նկատելի շեղումներ հանրապետության միջին ցուցանիշից, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում այդ գյուղերի ժողովրդագրական գործընթացների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա,
- 3) ՀՀ միջինի համեմատ գյուղական համայնքների բնակչության տարիքային հիմնական խմբերի տոկոսային մեծությունների առավել ակնհայտ տարբերություններ կան հատկապես Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում, որոնք առանձնանում են լեռնային բարդ ռելիեֆով, բնական համալիրի տարրերի բազմազանությամբ, սահմանամերձ ու ծայրամասային դիրքով, տարածաշրջանային իրավիճակով և սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով,
- 4) ՀՀ գյուղական համայնքներից բնակչության տարիքային հիմնական խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման համար առավել բարենպաստ, բարենպաստ և լավ իրավիճակ ունեն ընդամենը 198, բավարար իրավիճակ՝ մոտ 300, իսկ վատ և շատ իրավիճակ՝ շուրջ 244 գյուղական համայնք (ՀՀ գյուղական համայնքների 28 %-ից ավելին),

Աղյուսակ 8

**ՀՀ տարածաշրջանների գյուղական համայնքների բնակչության հիմնական
տարիքային խմբերի տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից բարձր և ցածր ցուցանիշ՝
ունեցող գյուղական համայնքների թիվը (01.01.2012 թ.)**

Մարզերը և տարածա- շրջանները	Կանանքների դուրսկան մերժությունը	Աշխատունակ բնակչության տոկո- սային մեծությամբ ՀՀ միջին ցուցանի- շից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական հա- մայնքների թիվը		Նետաշխատունակ բնակչության տոկոսա- յին մեծությամբ ՀՀ մի- ջին ցուցանիշից բարձր և ցածր ցու- ցանիշ ունեցող գյու- ղական համայնքների թիվը		Մինչաշխատունակ բնակչության տոկո- սային մեծությամբ ՀՀ միջին ցուցանի- շից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական հա- մայնքների թիվը	
		բարձր	ցածր	բարձր	ցածր	բարձր	ցածր
Արագածոտնի	112	53/47,3	59/52,7	43/38,4	69/61,6	59/51,8	53/48,2
Արագածի	22	3	19	7	15	20	2
Աշտարակի	30	21	9	11	19	7	23
Ապարանի	20	13	7	9	11	4	16
Թալինի	40	16	24	16	24	28	12
Արարատի	93	63/67,7	30/32,3	28/30,1	65/69,9	41/44,1	52/55,9
Արտաշատի	38	29	9	9	29	11	27
Արարատի	29	15	14	11	18	18	11
Մասիսի	26	19	7	8	18	12	14
Արմավիրի	94	65/69,1	29/30,9	24/25,5	70/74,5	41/43,6	53/56,4
Արմավիրի	37	21	16	15	22	17	20
Բաղրամյանի	15	13	2	1	14	7	8
Եղմածնի	42	31	11	8	34	17	25
Գեղարքունիքի	86	41/47,7	45/52,3	35/40,7	51/59,3	49/57,0	37/43,0
Գավառի	11	9	2	1	10	2	9
Կրասնոսելսկի	14	3	11	12	2	5	9
Մարտունու	16	11	5	0	16	14	2
Սևանի	10	7	3	3	7	6	4
Վարդենիսի	35	11	24	19	16	22	13
Լոռու	105	44/41,9	61/58,1	73/69,5	32/30,5	39/37,1	66/62,9
Գուգարքի	21	6	15	16	5	8	13
Թումանյանի	27	7	20	24	3	8	19
Սպիտակի	20	13	7	11	9	8	12
Ստեփանավ- անի	18	10	8	12	6	4	14
Տաշիրի	19	8	11	10	9	11	8
Կոտայքի	60	40/66,7	20/33,3	17/28,3	43/71,7	25/41,7	35/58,3
Կոտայքի	30	19	11	9	21	12	18
Նահիյի	16	12	4	3	13	6	10
Քրազդանի	14	9	5	5	9	7	7
Շիրակի	115	70/60,9	45/39,1	40/34,8	75/65,2	49/42,6	66/57,4
Ախուրյանի	33	24	9	11	22	7	26
Ամասիայի	18	9	9	1	17	11	7
Աճիի	16	11	5	4	12	7	9

Աշոցքի	25	14	11	11	14	15	10
Արթիկի	23	12	11	13	10	9	14
Սյունիքի	101	19/18,8	82/81,2	81/80,2	20/19,8	44/43,6	57/56,4
Գորիսի	23	5	18	16	7	17	6
Կապանի	35	4	31	32	3	5	30
Մեղռու	11	1	10	10	1	3	8
Սիսիանի	32	9	23	23	9	19	13
Վայոց Ճորի	42	21/50,0	21/50,0	28/66,7	14/33,3	11/26,2	31/73,8
Եղեգնաձորի	26	18	8	14	12	3	23
Վայքի	16	3	13	14	2	8	8
Տավուշի	57	5/8,8	52/91,2	49/86,0	8/14,0	31/54,4	26/45,6
Իջևանի	24	2	22	19	5	19	5
Նոյեմբերյանի	17	2	15	14	3	7	10
Տավուշի	16	1	15	16	0	5	11
Ընդամենը ՀՀ-ում	865	421/48,7	444/51,3	418/48,3	447/51,7	387/44,7	478/55,3

5)ՀՀ-ում առավելապես կենտրոնական դիրք ունեցող և մայրաքաղաքին մոտ ընկած մարզերում և տարածաշրջաններում գերակշռում են այնպիսի գյուղական համայնքները, որոնք բնակչության հիմնական տարիքային խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման առումով գտնվում են քիչ թե շատ լավ և բարենապատ իրավիճակում, իսկ ծայրամասային ու սահմանամերձ դիրք զբաղեցնող Սյունիքի, Վայոց Զորի և Տավուշի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման սուր հիմնախնդիրներով աչքի ընկնող Լոռու մարզերում ավելի մեծ թիվ են կազմում բնակչության հիմնական տարիքային խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման առումով վատ և շատ վատ իրավիճակ ունեցող գյուղական համայնքները,

6) Հանրապետության գյուղական համայնքներում առկա բնակչության սեռատարիքային կառուցվածքում ստեղծված իրավիճակը հանրապետական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջում է իրականացնել սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, հարկային և տարածաշրջանային այնպիսի քաղաքականություն, որոնք կնպաստեն գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, ժողովրդագրական գործընթացների բարելավնանը և գյուղական համայնքներում բնակչության սեռատարիքային կառուցվածքի առավել նպաստավոր իրավիճակի ձևավորմանը: Վերջինս իր հերթին դառնում է ՀՀ գյուղական համայնքների և տարաբնակեցման համակարգի զարգացմանն ու առաջընթացին նպաստող գործոն:

6.4 Վարչատարածքային բաժանման կատարելագործումը որպես գյուղական

բնակատեղերի ու տարաբնակեցման զարգացման գործոն: ՀՀ-ի նման լեռնային և կտրատված մակերևույթ ունեցող երկրներում վարչատարածքային բաժանման համակարգն առավել կարևոր դեր ունի գյուղական տարաբնակեցման և առանձին գյուղերի զարգացման համար: ՀՀ վարչատարածքային բաժանման այժմյան սխեմայում հաշվի չեն առնվել երկու կարևորագույն հանգամանք. ա) անցունային ժամանակաշրջանում վարչատարածքային բաժանումը պետք է իրականացվեր ոչ թե վարչական միավորների խոշորացման, այլ համեմատաբար փոքր միավորների ստեղծման ճանապարհով՝ հաշվի առնելով առանձին տարածաշրջանների մակերևույթի առանձնահատկությունները, բ) վարչատարածքային բաժանման սխեմայում անտեսվել է տնտեսական հատկանիշը, հաշվի չեն առնվել առանձնացված միավորների բնատնտեսական առանձնահատկությունները, տարաբնակեցման բնույթը և

այլ գործոններ:

Ներկայումս ՀՀ-ում առավել հրատապ և հիմնավորված են վարչատարածքային վերակազման հետևյալ փոփոխությունները՝ Սյունիքը բաժանել երկու մարզի. Կապանի ու Սեղու և Գորիսի ու Սիսիանի տարածաշրջաններով, Լոռու մարզից առանձնացնել Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջանները, իսկ Լոռու Թումանյանի և Տավուշի Նոյեմբերյանի տարածաշրջանները միավորել նոր վարչատարածքային միավորի մեջ, Կրասնոսելսկի տարածաշրջանը միացնել Տավուշի մարզին, Գեղարքունիքից առանձնացնել Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանները և ստեղծել նոր մարզ, Աշոցքի և Ամասիա տարածաշրջաններով նոր՝ Աշոցքի մարզ Ամասիա կենտրոնով: Վարչատարածքային նման վերակազմումների շնորհիվ Սեղու, Սիսիանի, Տաշիրի, Կրասնոսելսկի, Վարդենիսի, Նոյեմբերյանի և այլ տարածաշրջանների սահմանամերձ և լեռնային բնակավայրերը ծեռք կրերեն սոցիալ-տնտեսական զարգացման առավել նպաստավոր պայմաններ:

Հարթավայրային տարածք և միջընակավայրային համեմատաբար զարգացած տրանսպորտային ուղիներ ունեցող և լեռնային ու կտրատված մակերևույթ և միջբնակավայրային թույլ կապեր ունեցող տարածաշրջանների գյուղական համայնքների խոշորացման հարցի նկատմամբ պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում:

6.5 Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը և տարարնակեցման կատարելագործումը որպես ՀՀ տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կայուն զարգացման նախադրյալ:

- Քանի որ ՀՀ տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից 1800 մ է, տարածքի ավելի քան 70 և բնակավայրերի շուրջ 51 %-ը գտնվում են ծովի մակարդակից 1500 մ-ից ավելի բարձրության վրա, ապա ՀՀ ողջ տարածքի կայուն և համաշափ բնակեցումը և տարածքային ռեսուրսների լիարժեք օգտագործումը հանարվում են համապետական նշանակության կարևորագույն խնդիր:
- ՀՀ տարածքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը կախված է նաև գյուղական տարարնակեցումից, քանի որ գյուղական բնակատեղերը ոչ միայն մարդկանց բնակության վայրեր են, այլ նաև այն արոտավայրերը, խոտհարքերը և անտառները, որոնք հարում են գյուղերին կամ ոչ մեծ տարածքներով ցրված են գյուղերի միջև և ակտիվորեն օգտագործվում են գյուղական բնակչության կողմից:
- ՀՀ լեռնային և սահմանամերձ շրջաններում տնտեսության հիմնական ճյուղի՝ գյուղատնտեսության զարգացման մակարդակը, տարածքների լիարժեք օգտագործումը և այդ շրջաններում բնակչության միգրացիայի կարգավորումը մեծապես կախված է նաև գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացից, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի խոշորացումից:
- ՀՀ 14 լեռնային և սահմանամերձ տարածաշրջաններին 1970 թ. բաժին էր ընկնում ՀՀ գյուղական բնակչության շուրջ 30 %-ը, իսկ 2012 թ-ին՝ 19.7 %-ը, դրա պատճառով կրճատվել է այդ տարածաշրջանների տնտեսական ներուժը, նվազել է դրանց տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողահանդակների օգտագործման արդյունավետությունը:
- ՀՀ գյուղական տարարնակեցման հեռանկարային զարգացման հիմնական ուղիներից մեկը պետք է դառնա նախալեռնային ու լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր գյուղերի խոշորացումը, լրված բնակավայրերի վերականգնումն ու ամրացումը: Դա կնպաստի այդ շրջանների տարածքային ռեսուրսների լիարժեք օգտագործմանը, համալիրային զարգացմանը և կիանդիսանա կարևոր նախադրյալ ՀՀ կայուն զարգացման համար:

Աղյուսակ 9

Դայաստանի Դամրապետության լեռնային և սահմանամերձ շրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժման ըստ մարդաշատության խմբերի (1959-2011 թթ.)¹

Գույքանությունը միավորությունը	Վեհական ստուգությունը	Գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխումը ըստ մարդաշատության խմբերի (մարդ)													
		Աշխատավայրերի 200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի			
		3	μ	3	μ	3	μ	3	μ	3	μ	3	μ		
1959	446	283057	111 24.9	12164 4.3	152 34.1	49203 17.4	102 22.9	70001 24.7	71 15.9	108528 38.,3	7 1.6	25401 9,0	3 0.6	17760 6,3	635
1970	377	310480	4.2 11.1	5392 1.7	125 33.2	41347 13.3	114 30.2	79729 25.7	88 23.3	150579 48.5	7 1.9	27000 8.7	1 0.3	6433 2.1	824
1988	354	275026	72 20.,3	8170 3.0	116 32.8	40323 14.7	75 21.2	56055 20.4	81 22.9	130329 47.4	9 2.5	33255 12.0	1 0.3	6894 2.5	777
1995	320	250095	73 22.8	8643 3.5	107 33.4	36759 14.7	62 19.4	42848 17.1	64 20.0	104865 41.9	12 3.8	44617 17.8	2 0.6	12363 5.0	782
2011	368	212312	115 33,7	11912 5,6	101 29,5	34068 16,0	66 19,3	45686 21,5	52 16,2	88830 41,9	8 2,3	31816 15,0	-	-	620

1.Աղյուսակը կազմած է «Населенныие пункты и население Армянской ССР за 1831-1959 годы» Е. 1962 թ. ժողովածուի,
ՀՀ մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ ՀՀ ԱՎԾ ամենամյա հրապարակումների և «ՀՀ առկա և
մշտական բնակչության բաշխումն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և սեոի» 2011թ. մարդահամարի տվյալ-
ների հիման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եզրակացություններ

1. Գյուղական բնակատեղերում ու տարաբնակեցման մեջ տեղի ունեցող փոփոխություններն առանձնահատուկ գծերով են դրսնորվում լեռնային երկրներում և տարածաշրջաններում, քանի որ վերջիններս առավել զգայուն են բնատնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, քաղաքական, աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, էկոլոգիական և տեղային այլ գործընթացներում տեղի ունեցած փոփոխությունների նկատմամբ:
2. ՀՀ նման լեռնային ռելիեֆ, ուրբանիզացիայի խիստ կենտրոնացվածություն ունեցող երկրներում տարաբնակեցման համակարգում գյուղական բնակատեղերն ու տարաբնակեցումն ունեն «ինքնուրույնության» բավական բարձր աստիճան և էական դեր են խաղում գյուղական բնակատեղերի զարգացման, տարածքային ու մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, կայուն հասարակական զարգացման գործում:
3. Տարաբնակեցման էլեմենտների, ձևերի ու տիպերի բազմազանությամբ աչքի ընկնող ՀՀ-ում և նմանատիպ լեռնային երկրներում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններում համալիրային տիպաբանությունն ու շրջանացումն ունեն դրանք ամբողջացնող և զարգացման միտումները բացահայտող դեր:
4. ՀՀ-ի նման լեռնային երկրներում կայուն հասարակական զարգացում ապահովելու, դրանց տարածքային և մարդկային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նախապայմաններից մեկը տարաբնակեցման համակարգի պահպանումն ու կատարելագործումն է, գյուղական բնակատեղերում ուրբանացման գործընթացների տարածումն ու խորացումը:
5. ՀՀ տարածքի լեռնային բնույթը, փոքր չափերը, ռելիեֆի մասնատվածությունը, բացարձակ բարձրությունները, բնական համալիրի այլ տարրերն ու բնաշխարհագրական ակտիվ գործող երևույթները զգալիորեն նեղացնում են բնակեցման արեալը և իրենց ազդեցությունն են թողնում գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման վրա:
6. Լեռնային երկրներին բնորոշ՝ ըստ բարձրության գոտիների գյուղական բնակչության խտության, բնակավայրերի թվի և միջին մարդաշատության նվազման օրինաչափությունը ՀՀ-ում չի պահպանվում: Այստեղ ամբողջ բնակչության համեմատ գյուղական բնակչության տեղաբաշխումն ունի ավելի փոքր անհամանառություններ:
7. Տարածքի լեռնային ռելիեֆի առանձնահատկություններով պայմանավորված ՀՀ-ում գյուղական բնակավայրերի մարդաշատությունը խիստ բևեռացված է: Այստեղ գյուղական բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացմանը համեմատ միջին մարդաշատության նվազման կամ ավելացման որևէ օրինաչափություն չկա:
8. ՀՀ ոչ մեծ լեռնային տարածքն աչքի է ընկնում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման ձևերի, համալիրային (տեղական) տիպերի ու ենթատիպերի բազմազանությամբ: Տարաբնակեցման ձևավորման և զարգացման պայմաններն այստեղ փոփոխվում են ոչ միայն մեկ լանդշաֆտային գոտուց մյուսին անցնելիս, այլ նաև դրանցից յուրաքանչյուրի ներսում:
9. ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցի կայունացումից հետո տեղի է ունեցել ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական տարաբնակեցման պատկերի

փոփոխություն, գյուղական բնակչության տեղաբաշխման մեջ զգալիորեն ավելացել է 800-1000 մ բարձրության գոտու տեսակարար կշիռը, նվազել լեռնային և սահմանամերձ շրջանների մասնաբաժինը:

10. ՀՀ մարզերն (բնատնտեսական միավորները) իրենց տարածքի սահմաններում ունենալով տարաբնակեցման լավ արտահայտված գծեր, առաջին հերթին մինչանցից տարբերվում են բնակչության տարածքային կազմակերպման առանձնահատկություններով: Չնայած որ վերջին տասնամյակներին այդ տարբերություններն ինչ որ չափով համահարթվել են, այնուամենայնիվ մարզերն ու բնատնտեսական միավորները պահպանում են գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման իրենց բնորոշ գծերն ու առանձնահատկությունները:
11. ՀՀ գյուղական տարաբնակեցման մեջ վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների առավել հատկանշական կողմերից են.
ա) բոլոր մարզերում և տարածաշրջաններում գյուղական բնակչության թվի նվազումը,
բ) բնակչության թվի նվազումը ոչ միայն փոքր գյուղերում, այլ նաև մեծ, խոշոր և խոշորագույն գյուղերում,
գ) հարյուրավոր գյուղերում առաջացած անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակը,
դ) ըստ գերակշռող մարդաբանակի գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև տարբերության խորացումը,
ե) ՀՀ գյուղական տարաբնակեցման մեջ առաջացած հիմնախնդիրների առավել սուր դրսևորումը ՀՀ բարձրլեռնային և սահմանամերձ շրջաններում:
12. Ժամանակակից պայմաններում գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման զարգացումը և կատարելագործումը ՀՀ տարբեր մարզերում, տարածաշրջաններում, գյուղական համայնքներում ու բնակավայրերում տեղի է ունենում տարբեր կերպ՝ կախված դրանց աշխարհագրական դիրքից, բնատնտեսական առանձնահատկություններից, սոցիալ-ժողովրդագրական ու տարածաշրջանային իրավիճակից:
13. ՀՀ տարածաշրջանների գյուղական բնակչության խտությունը և բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տվյալ տարածաշրջանի գյուղատնտեսական հողատարածքների բացարձակ և հարաբերական մեծությունների հետ:
14. ՀՀ գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման հետագա զարգացումն ու կատարելագործումը նախ և առաջ պայմանավորված է գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումից:
15. ՀՀ բոլոր մարզերում ու տարածաշրջաններում գյուղական տարաբնակեցման զարգացման և կատարելագործման վրա էական ազդեցություն կունենա մարզային ու տարածաշրջանային կենտրոնների դերի բարձրացումը, տարաբնակեցման համակարգում դրանց գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրականացումը:
16. ՀՀ-ում առավելապես կենտրոնական դիրք ունեցող և մայրաքաղաքին մոտ ընկած մարզերում գերակշռում են բնակչության հիմնական տարիքային խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման առումով լավ ու բարենպաստ իրավիճակ ունեցող գյուղական համայնքները, իսկ ծայրանասային ու սահմանային դիրք զբաղեցնող մարզերում՝ բնակչության հիմնական տարիքային խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման առումով վատ իրավիճակ ունեցող գյուղական համայնքները:

Առաջարկություններ

1. ՀՅ գյուղական բնակավայրերի համալիրային տիպերի առանձնացումը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել բնակավավայրերի առանձին խնբերին բնորոշ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին, մշակել ու իրականացնել գյուղական բնակավայրերի զարգացման և կառավարման գիտականորեն հիմնավորված ծրագրեր:
2. Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում առկա բնակչության սեռատարիքային կառուցվածքում ստեղծված իրավիճակը հանրապետական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջում է իրականացնել սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, հարկային և տարածաշրջանային հատուկ քաղաքականություն, որոնք կնպաստեն գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, ժողովրդագրական գործընթացների բարելավմանը և գյուղական համայնքների բնակչության սեռատարիքային կառուցվածքի առավել նպաստավոր իրավիճակի ձևավորմանը:
3. Վարչատարածքային բաժանման վերակազմումն ու կատարելագործումը կնպաստի Հայաստանի Հանրապետության և մասնավորապես, լեռնային ու սահմանամերձ գյուղական համայնքների ամրացմանն ու զարգացմանը և տարաբնակեցման համակարգի կատարելագործմանը:
4. Մարզկենտրոնների, տարածաշրջանային կենտրոնների, առանձին քաղաքային բնակավայրերի, տեղական նշանակության կենտրոնների և գյուղական բնակավայրերի միջև տրանսպորտային հաղորդակցության բարելավումը կնպաստի գյուղական բնակավայրերի տնտեսական բազայի ամրապնդմանը և դրանց սոցիալ-տնտեսական առաջընթացին:
5. Հարթավայրային տարածք և համեմատաբար զարգացած տրանսպորտային ուղիներ և լեռնային ռելիեֆ ու միջբնակավայրային թույլ կապեր ունեցող տարածաշրջանների գյուղական համայնքների խոշորացման հարցում պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում: Ներկայիս իրավիճակի պայմաններում նպատակահարմար չէ լեռնային և սահմանամերձ շրջաններում գյուղական համայնքների թվի կրճատումը:
6. ՀՅ գյուղական բնակատեղերի ու տարաբնակեցման հեռանկարային զարգացման և քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի նախալեռնային ու լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր ու մանր գյուղերի խոշորացումը, բնակավայրերի առկա ցանցի պահպանումը, տասնյակ լրված գյուղերի վերականգնումը: Դա կնպաստի նշված շրջանների տարածքային ու գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, մարզերի սոցիալ-տնտեսական համալիրային զարգացմանը, կհանդիսանա բավարար նախադրյալ ՀՅ կայուն հասարակական զարգացման և պաշտպանունակության ամրապնդման ու հզորացման համար:

**Թեմայի վերաբերյալ հրատարակած աշխատությունների ցանկը
Մենագրություններ**

1. **Պոտոսյան Ա.Յ.**, Հայաստանի Հանրապետության գյուղական տարաբնակեցումը, ԵՊՀ հրատ., Ե., 1999 թ. 240 էջ:
2. **Պոտոսյան Ա.Յ., Սանասյան Մ.Գ., Գրիգորյան Ա.Թ.**, Շիրակի մարզ. Բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, «Նահապետ», Ե. 2002, 130 էջ :
3. **Պոտոսյան Ա.Յ., Սանասյան Մ.Գ., Գրիգորյան Ա.Թ.**, Սյունիքի մարզ. Բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, «Նահապետ», Ե. 2002, 155 էջ:
4. **Պոտոսյան Ա.Յ.**, Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, «Աստղիկ», Ե., 2013, 416 էջ:

Գիտական հոդվածներ

5. **Պոտոսյան Ա.Յ., Բարայան Դ., Սանասյան Մ.Գ.**, Ժամանակակից ուրբանիզացիան և Շամշադինի շրջանի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, «Ագրոարդ», գիտություն և արտադրություն, 1987, թիվ 12, էջ 22-29:
6. **Պոտոսյան Ա.Յ., Հայկական ՍՍՀ գյուղական բնակավայրերի մարդաշատությունը, «Ագրոարդ», գիտություն և արտադրություն, Ե., 1988թ. թիվ 3, էջ 30-36:**
7. **Պոտոսյան Ա.Յ., Հայկական ՍՍՀ գյուղական բնակավայրերի մորֆոլոգիական առանձնահատկությունները, «Ագրոարդ», գիտություն և արտադրություն, Ե., 1989թ. թիվ 2, էջ 14-22:**
8. **Պոտոսյան Ա.Յ., Հայկական ՍՍՀ գյուղական տարաբնակեցման տիպերը, «Ագրոարդ», գիտություն և արտադրություն, Ե., 1989թ. թիվ 11, էջ 3-13:**
9. **Պոտոսյան Ա.Յ., Ինչո՞ւ են դատարկվում լեռնային գյուղերը, «Լեռնինան ուղիով», Ե., 1989, թիվ 12, էջ 45-50:**
10. **Պոտոսյան Ա.Յ., Սանասյան Մ.Գ.**, Զանգեզուրի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1990, թիվ 2, էջ 126-129:
11. **Պոտոսյան Ա.Յ., Հայկական ԽՍՀ գյուղական տարաբնակեցման ռեգիոնալ առանձնահատկությունները, «Ագրոարդ», գիտություն և արտադրություն, Ե., 1990, թիվ 5, էջ 11-23:**
12. **Պոտոսյան Ա.Յ., ՀՀ գյուղական տարաբնակեցման 1926-1998թթ. շարժնթացի հիմնական արդյունքները, «Աշխարհագրություն 99», գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 1999, էջ 106-112:**
13. **Պոտոսյան Ա.Յ., Սանասյան Մ.Գ., Սարգսյան Լ.Մ.**, Տարաբնակեցումը և Շիրակի մարզի տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, «Աշխարհագրություն -2001», Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները /գիտագործնական կոնֆերանսի նյութեր Ե., 2002, էջ 134-138:
14. **Պոտոսյան Ա.Յ., Ղամբարյան Գ.Գ.**, Տարաբնակեցումը որպես արդյունավետ բնօգտագործման նախադրյալ, «Աշխարհագրություն-2001», Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները, /գիտա-գործնական կոնֆերանսի նյութեր/, Ե., 2002, էջ 131-134:
15. **Պոտոսյան Ա.Յ., ՀՀ բնակչության միգրացիայի հարցի շուրջը, Основные проблемы географии Южного Кавказа и прилегающих регионов. Материалы конференции посвященной 70-летию геогр. фак-та, Е. 2005, с. 199-203.**
16. **Պոտոսյան Ա.Յ., ՀՀ բնակչության միգրացիայի առանձնահատկությունները, //Աշխարհագրական գիտությունը Հայաստանում. ներկան և ապագան //, ՀԱԸ**

- հիմնադրման 70 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2006, էջ 241-245:
17. **Պոտոսյան Ա.Յ.**, Բնակչության աշխարհագրություն, //Աշխարհագրական գիտությունը Հայաստանում, Ներկան և ապագան//, ՀԱԸ հիմնադրման 70 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե. 2006, էջ 48-52:
 18. **Պոտոսյան Ա.Յ.**, Լոռու մարզի գյուղական բնակվայրերի աշխարհագրական հիմնախնդիրները, //Լոռու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները//, Գիտական հոդվածների ժողովածու, Վանաձոր 2007, էջ 80-86:
 19. **Պոտոսյան Ա.Յ.**, ՀՀ գյուղական տարաբնակեցումը, քարտեզ 1:750.000, Հայաստանի ազգային ատլաս Ե. 2007թ, էջ 130-131:
 20. **Պոտոսյան Ա.Յ.**, Լեռնային ռելիեֆը որպես գյուղական տարաբնակեցման գործոն, //Прикладные вопросы географии горных областей Альпийско-Гималайского пояса//, Материалы конференции, посвященной 90-летию профессора С.П.Балъяна Ереван 2007, с. 418-422
 21. **Պոտոսյան Ա.Յ.**, ՀՀ գյուղական տարաբնակեցման ձևավորման պատմաշխարհագրական նախադրյալները, Հանրապետական գիտական նստաշրջան, հոդվածների ժողովածու, Գյումրի, 2008, էջ 459-462:
 22. **Պոտոսյան Ա.Յ., Թորոսյան Մ.Մ.**, Գեղարքունիքի մարզի բնակչության և բնակվայրերի շարժնթացը. ժամանակակից միտումները, Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2008, էջ 129-134:
 23. **Պոտոսյան Ա.Յ.**, Շիրակի մարզի գյուղական տարաբնակեցման շարժնթացի հարցի շուրջ, Հանրապետական գիտականի նստաշրջանի նյութեր նվիրված 1988-ի երկրաշարժի 20-րդ տարեկանին, Գյումրի, պրակ. 2, 2009, էջ 352-355:
 24. **Պոտոսյան Ա.Յ.**, ՀՀ գյուղական բնակչության շարժնթացի ժամանակակից միտումները և գյուղական տարաբնակեցման հիմնախնդիրները, Միջազգային գիտաժողովի նյութեր նվիրված Վանաձորի պետ. մանկ. ինստիտուտի հիմնադրման 40 ամյակին, Ա ՊՐԱԿ, Վանաձոր, 2009, էջ 268-272:
 25. **Պոտոսյան Ա.Յ.**, Լեռնային երկրների գյուղական տարաբնակեցման պայմանների և առանձնահատկությունների մի քանի հարցեր, //Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը//, Գիտաժողովի նյութեր, Ե., 2011, էջ 132-141:
 26. **Պոտոսյան Ա.Յ.**, ՀՀ գյուղական տարաբնակեցման շարժնթացի մի քանի հարցեր, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Աշխարհագրություն և երկրաբանություն, Ե., 2011, թիվ 3, էջ 32-38:
 27. **Պոտոսյան Ա.Յ.**, Գյուղական տարաբնակեցման ձևավորման բնաաշխարհագրական նախադրյալները, «Ագրոգիտություն», գիտական ամսագիր, Ե., 2011, թիվ 11-12, էջ 553-558:
 28. **Պոտոսյան Ա.Յ.**, ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկությունները ՀՀ-ում որպես լեռնային երկրի, «Ագրոգիտություն» գիտական ամսագիր, Ե., 2012, թիվ 3-4, էջ 162-169:
 29. **Պոտոսյան Ա.Յ., Դակորյան Դ.**, Սյունիքի մարզի գյուղական տարաբնակեցման ձևավորման և զարգացման մի քանի հարցեր, «Ագրոգիտություն», գիտական ամսագիր, Ե., 2012, թիվ 7- 8 (647-648), էջ 391-397:
 30. **Պոտոսյան Ա.Յ., Քոյսյան Ծ.**, ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի տարրածաշրջանային տարրերությունները և հիմնախնդիրները, Ակունք, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Գիտական ժողովածու, Ե., 2012, 3 (6), էջ 189-196:
 31. **Պոտոսյան Ա.Յ., Պոտոսյան Վ.Ա.**, ՀՀ գյուղական բնակավայրերի համալիրային տիպայնացումը որպես դրամց հեռանկարային զարգացման հիմք, Ակունք, ԵՊՀ

- Իջևանի մասնաճյուղի Գիտական ժողովածու, Ե., 2013, 1 (7), էջ 193-204 :
32. **Պոտոսյան Ա.Յ.**, Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցումը. ձևավորումը, շարժընթացը, ժամանակակից հիմնախնդիրները, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Աշխարհագրություն և Երկրաբանություն, Ե., 2013, թիվ 2, էջ 41-47:
 33. **Պոտոսյան Ա.Յ., Պոտոսյան Վ.Ս.**, Վայոց Զորի մարզի գյուղական տարաբնակեցումը. ձևավորումը, շարժընթացը, հիմնախնդիրները, //Տնտեսության համաշափ զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում//, Հանրապետական գիտական կոնֆերանսի նյութեր, Եղեգնաձոր, Ե., 2013, էջ 93-98:
 34. **Պոտոսյան Ա.Յ., Քոյյան Ծ.Ս.**, ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքի տարածաշրջանային առանձնահատկությունները և հիմնախնդիրները, Ակունք, ԵՊՀ ԻՄ գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2013, թիվ 21 (8), էջ 173-185:
 35. **Պոտոսյան Ա.Յ., Քոյյան Ծ.Ս., Ստեփանյան Ռ.**, ՀՀ գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի բարելավումը որպես գյուղական բնակավայրերի զարգացման նախադրյալ, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, Ե., 2014, թիվ 1, էջ 38-45:
 36. **Պոտոսյան Ա.Յ., Քոյյան Ծ.Ս.**, ՀՀ գյուղական տարաբնակեցման զարգացման և վերափոխման վրա ազդող հիմնական գործոնների տարածաշրջանային տարբերությունները, // ԵՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետ, Տարեգիրք, 2013// Ե. 2014, էջ 681-690:
 37. **Подосян А.А.** Урбанизация и некоторые проблемы сельского расселения в горных районах Армянской ССР, В сб. //Проблемы социально-экономического развития горных районов// Е., 1985, с. 199-202.
 38. **Подосян А.А., Манасян М.Г.** Некоторые методические вопросы определения степени хозяйственного освоения горных территорий, //Географическое исследование и региональное природопользование//, Фрунзе- 1989 , с. 30-32.
 39. **Подосян А.А.** Почему пустеют горные села, "По Ленинскому пути", Е., 1989., N12, с. 46-51.
 40. **Подосян А.А., Валесян Л.А, Назарян Х.Е., Манасян М.Г., Торосян М.М.** Спитакское землетрясение как природная и техногенная экономическая катастрофа и его географические последствия. Материалы к IX съезда географического общества СССР, Ленинград 1990, 0,1 п.л.
 41. **Подосян А. А., Манасян М.Г., Хօեցյան Ա.Բ.** Особенности миграции населения Республики Армения, //Проблемы миграции в полигэтничном Кавказском регионе /Тезисы Международной научной конференции/, Москва-Ставрополь, 2004, с. 217-221.
 42. **Подосян А. А., Манасян М.Г.** Устойчивое развитие горных регионов и социально-экономическая география, // "Теория социально-экономической географии: Синтез современных знаний//, Смоленск 2006, с. 159-163.
 43. **Подосян А. А.** Природно-географические предпосылки развития сельского расселения в горных странах (на примере РА). Известия Аграрной науки, Тбилиси, том 10, N 1 2012, с.123-128.
 44. **Potosyan A. A.** The Main Factors of Development and Transformation of the Rural Settlement in Mountainous Countries (for Example RA), Annals of Agrarian Science, 2014, Vol. 12, No. 2, p. 70-75:

АКСЕЛ ПОДОСЯН
ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ГЕОГРАФИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ СЕЛЬСКОГО
РАССЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, КАК ГОРНОЙ СТРАНЫ
АННОТАЦИЯ

Сельское расселение РА имеет древнюю историю, однако в своих основных чертах оно начало формироваться в 30-40-ые годы XIX века. В последующие десятилетия претерпев некоторые изменения в результате продолжающейся иммиграции, роста численности населения, возникновения новых и восстановления разрушенных и обезлюденных в прошлом сел сформировалась основа современного сельского расселения РА.

Процессы, происходящие на протяжении последних двух с половиной десятилетий в РА, породили экономические, социальные, демографические, территориальные и иные проблемы сельского населения и расселения. Географические исследования сельских поселений позволяют выявить происходящие в них процессы и современные тенденции развития. Анализ и оценка внутренних механизмов их развития и влияющих на них внешних факторов, дает возможность разработать и осуществить социально-экономическую, региональную и демографическую политику, что будет способствовать социально-экономическому прогрессу сельских населенных пунктов, преобразованию и совершенствованию сельского расселения, рациональному использованию территориальных и трудовых ресурсов сельских поселений.

В работе выдвинуты и обоснованы следующие теоретические и методические положения:

- В странах, имеющих подобно РА горный рельеф, большое разнообразие природных условий и высокий уровень урбанизации, сельские местности в системе расселения имеют достаточно высокую степень „самостоятельности“ и играют существенную роль в рациональном использовании территориальных и людских ресурсов в горных районах и в устойчивом общественном развитии.
- В горных районах комплексная типология сельских населенных пунктов и районирование играют большую роль в обобщении географических исследований и выявлении тенденций развития.
- Одной из предпосылок в обеспечении устойчивого общественного развития и рационального использования территориальных, людских и прочих ресурсов в горных районах заключается в сохранении и совершенствовании системы расселения, а также в распространении и углублении процессов урбанизации сельских поселений.

В данной работе впервые:

- Проведен анализ и дано обоснование методических вопросов комплексного географического исследования сельских местностей и расселения горных стран.
- Выявлены особенности и закономерности формирования и развития сельского расселения.
- На основе исследования динамики численности сельского населения и населенных пунктов РА выявлены современные тенденции и проблемы развития последних.
- Выявлена и обоснована роль районирования сельского расселения и таксономических единиц в перспективном развитии, планировании и управлении сельских населенных пунктов РА.
- Впервые проведены комплексные географические исследования сельских местностей и расселения марзов с выявлением особенностей и проблем их развития.
- Выявлено влияние природных, производственно-хозяйственных, финансовых, демо-

графических, административно-территориальных и урбанизационных факторов на современное развитие и преобразование сельских поселений.

- Обоснована роль взаимовлияния сельских поселений и расселения и административно-территориального деления РА.
- Выявлена роль социально-экономического развития сельских поселений, преобразования и совершенствования расселения в рациональном использовании территориальных и людских ресурсов, а также в обеспечении устойчивого общественного развития РА.
- Установлены основные направления развития сельских местностей и расселения РА на перспективу.

Результаты выполненных исследований позволили сделать следующие основные выводы и предложения:

- Горный рельеф территории РА и природно-географические факторы в значительной степени сужают ареал заселения РА и оказывают влияние на формирование и развитие сельских населенных пунктов.
- В современных условиях развития, преобразования и совершенствования расселения в марзах, регионах и сельских общинах и населенных пунктах РА имеют территориальные различия в зависимости от их географического положения, природных и экономических особенностей, социально-демографической и региональной обстановки.
- Плотность сельского населения в регионах и среднее расстояние между сельскими населенными пунктами находится в тесной связи с сельскохозяйственными угодьями. Дальнейшее преобразование и развитие отдельных сел и сельского расселения в целом обусловлено прежде всего рациональным использованием сельскохозяйственных земель и интенсификацией сельскохозяйственного производства.
- Создавшаяся ситуация в половозрастной структуре населения сельских общин РА, требует от республиканских, областных и местных органов управления осуществить особую социальную, экономическую, демографическую, налоговую и региональную политику, которая будет способствовать социально-экономическому развитию сельских общин, улучшению демографического процесса.
- Преобразование и совершенствование административно-территориального деления в горных и приграничных сельских общинах будет способствовать укреплению и развитию, а также улучшению системы расселения.
- Вопрос укрупнения сельских общин требует дифференцированного подхода к равнинным территориям с относительно развитой транспортной сетью и к территориям с расчлененным рельефом. В сложившейся обстановке нецелесообразно сокращение числа сельских общин в горных и приграничных районах.
- Одной из первостепенных задач развития сельского расселения РА является укрупнение небольших сел, сохранении существующей сети населенных пунктов и в восстановлении десятков покинутых сел в предгорных и горных и приграничных районах. Это будет способствовать рациональному использованию территориальных и сельскохозяйственных ресурсов, комплексному социально-экономическому развитию марзов, укреплению и усилению обороноспособности страны.

AKSEL POTOSYAN

THE MAIN GEOGRAPHICAL STUDY ISSUES OF RURAL SETTLEMENTS' DISTRIBUTION OF THE REPUBLIC OF ARMENIA AS A MOUNTAINOUS COUNTRY

SUUMARY

The current state of rural settlements' distribution has a long history, but in major sense it was formed in the 1830-40s. During the following decades the base of the current rural settlements' distribution of Armenia was formed. It has been influenced by immigrations, population growth, emerging new and revitalizing destroyed and abandoned villages.

During the last 25 years the different processes in RA have influenced on rural settlements of RA, causing economic, social, demographic, regional and other problems for rural population and settlements. The geographical research of the rural settlements of RA will promote an opportunity to reveal their current processes and trends of development. Analysis and assessment of their internal mechanisms and external factors will provide an opportunity to work out and implement such kinds of socio-economic, regional and demographic policy, which would promote the socio-economic advancement of the rural settlements of RA, changing and improving the rural settlements distribution, efficient usage of territorial and labor resources of rural settlements.

In the work the following theoretical-methodical ideas have been proposed and substantiated:

- 1) In the countries with mountainous relief, big variety of natural conditions and concentration of urbanization (like in Armenia) the rural settlements have a high level of "autonomy" in the system of settlements' distribution and play a significant role in efficient use of territorial and labor resources, as well as in sustainable human development;
- 2) Complex typology and regionalization of rural settlements in mountainous countries are concluding and revealing the development trends of geographical researches;
- 3) One of the pre-conditions of ensuring sustainable human development and efficient usage of their territorial, human and other resources is protection and development of rural settlements' distribution system, spreading and deepening of urbanization processes in rural settlements.

In the given work the following research activities have been accomplished for the first time:

- 1) The theoretical and methodical problems of complex geographical study of rural settlements and their distribution systems in mountainous countries (case study Armenia) have been analyzed and substantiated;
- 2) The features and patterns of forming and development of rural settlements' distribution in mountainous countries have been revealed;
- 3) A complex typology and regionalization of rural settlements and rural settlements' distribution of RA were carried out paying a special importance to the factor of mountainous relief;

- 4) The dynamics of rural population's and rural settlements' number in RA was studied, the current trends and problems were revealed;
- 5) The role of rural settlements' distribution and taxonomic units in perspective development of rural settlements, their planning and management in mountainous countries like Armenia were revealed and substantiated;
- 6) A complex geographical study of rural settlements and their distribution of the marzes (regions) of Armenia was accomplished for the first time and the current features and problems were revealed;
- 7) The role of natural, economic, financial, demographic, administrative-territorial and other factors influencing on development and transformation of rural settlements of RA, as well as their regional differences were examined;
- 8) The role of interconnection of rural settlements and their distribution in administrative-territorial division, as well as transformation of rural settlements and their distribution in RA was substantiated;
- 9) The role of social-economic development of rural settlements and transformation and improvement of settlements' distribution in RA from the standpoint of efficient usage of territorial and human resources, as well as ensuring sustainable human development was revealed;
- 10) The main directions of perspective development of rural settlements and their distribution system were substantiated.

On the base of research results the following main conclusions may be done:

- 1) The mountainous character of the relief of RA and other natural-geographical phenomena are making the settlements' distribution areal in RA narrower and are influencing on forming and further development of rural settlements;
- 2) The current development, transformation and improvement of rural settlements and their distribution in different marzes, districts and rural communities of Armenia are different, depending on their geographical position, natural-economic features, socio-demographic and regional situations;
- 3) The density of rural population in the regions of RA, the distance between the rural settlements are linked closely to absolute and relative sizes of agricultural lands. The further transformation and improvement of rural settlements' distribution in concrete regions is caused by the efficient usage of agricultural lands and intensification of agricultural production;
- 4) The situation of age-sex structure of the population in the rural communities of RA requires implementation of soial, economic, demographic, tax and regional policy by state, regional and local governance structures. It should promote the socio-economic development of rural communites, improve the demographic processes and shape the most favorable situation of the age-sex structure of the rural population.
- 5) Re – organization and improvement of administrative—territorial division will promote the consolidation and development of rural distribution system of RA, especially, in border and mountainous rural communities.
- 6) In the regions with relief and developed transportation system, as will as in the

territories with mountainous relief and weak inter-settlement connections the process of enlargement of rural settlements should be accomplished in different ways. Nowadays decreasing the number of rural settlements in mountainous and border regions is not relevant.

7) One of the priority tasks of perspective development of rural settlements' distribution of RA should be the magnification of small and medium-size villages in foothill, mountainous and border regions, protecting the existing settlements' network, reconstruction of dozens of abandoned villages. It will promote the efficient usage of territorial and agricultural resources of aforementioned regions, the complex socio-economic development of the marzes and will become a suitable pre-condition for sustainable human development of RA, strengthening the defense of the country.